Այո, մարդկության պատմությունը, ասում են, պատերազմների պատմություն է: Բայց մարդկությունը դեռ չի ծնել մեկին, որ հավասարապես թե՛ պատերազմ բերող է, թե՛ խաղաղություն: Անգամ պատերազմի եւ խաղաղության աստվածներն էին տարբեր: Վերջին 8 տարում մի քանի պատերազմ բերած մարդն ինքզինքը խաղաղության աստված է հռչակել:

Կարդացեք՝ էջ 5

Հայաստանը կանգնած է ճակատագրական խնդիրների առջեւ: Վարչապետի վերջին ելույթը Եվրոպայում, նրա հակահայկական գործողությունները, ամենօրյա խոսույթը ոչ միայն չեն պաշտպանում մեր ժողովրդի շահերը, այլեւ խորացնում են ներքաղաքական ճգնաժամը, թուլացնում պետական ինստիտուտները, սպառնում ազգային անվտանգությանը:

Կարդացեք՝ էջ 7

Փորձում է հիշեցնել 2020 թ. սեպտեմբերի 27-ը, այսինքն՝ այս սեպտեմբերին նույնպես պատերազմ կլինի: Սա շանտաժ է, որովհետեւ Ադրբեջանը չի որոշում՝ Հայաստանի հետ պատերազմի, թե ոչ, ոչ էլ 2020-ին էր որոշել: Դա աշխարհաքաղաքական գործողություն էր, Ադրբեջանին աջակցում էին Իսրայելը, Մեծ Բրիտանիան, մյուսները:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 47 (4182), 26 մարտ, հինգշաբթի, 2026

www.hraparak.am

ՔՊ մեր աղբյուրները պատմում են, որ Նիկոլ Փաշինյանն աննկարագրելի «մանթրաշի» մեջ է ընկել երեւանյան վերջին քարոզարշավից հետո, եւ քաղաքացիների բացահայտ բոյկոտին ու բացասական վերաբերմունքին արժանանալուց հետո թիմում հիմա քննարկում են իրենց առաջիկա քայլերը: Մասնավորապես՝ քավության նոխազ դարձնել Երեւանի քաղաքապետին, թե Տիգրան Ավինյանի վատ աշխատանքի հետեւանքն է, որ Երեւանն իրենց մերժում է: Ի սկզբանե որոշված է եղել, որ Երեւանում «ուրախ ավտոբուսը» չի պտտվի՝ հասկանալով, որ երեւանցիների հետ բարդ է լինելու: Անգամ Կոտայքից վերադառնալու ճանապարհին որոշ ՔՊ-ականներ հավելյալ ճշտել են, թե վաղն ինչ պլաններ կան, եւ պատասխան են ստացել, թե քարոզարշավն այս շաբաթ ավարտված է: Միայն ուշ գիշերին կուսակցականներին ծանուցել են, որ, առավոտյան 9.30-ից սկսած, Երեւանում են շրջելու: Ի դեպ, երեւանյան շրջագայությանը ոչ ամբողջ կազմով էին ներկա, ինչը նույնպես վկայում է, որ նախապես չեն պլանավորել, եւ շատերը մարզ են մեկնած եղել՝ փրկվելով այդ խայտառակությանը մասնակից դառնալուց: Մենք տեղեկացանք, որ ներկուսակցական ընտրությունների երկրորդ փուլից հետո էլ ՔՊ-ականները շարունակելու են հանդիպումների շարքը: Որոշել են հատկապես հանդիպումներ կազմակերպել Երեւանում, որ բարելավեն իրենց անմխիթար վարկանիշը, բայց թե ինչ ֆորմատով՝ առայժմ հայտնի չէ:

Ներկուսակցական քարոզարշավի անվան տակ վերջին շաբաթներին մարզերում «գաստրոլների» դուրս եկած ՔՊ-ականները, պարզվում է՝ ամենաշատը տպավորված են Գեղարքունիքի մարզի ընդունելությունից: Մեզ ասացին, որ իրենք էլ չեն սպասել նման ջերմ եւ մարդաշատ ընդունելություն՝ հաշվի առնելով, որ պատերազմից հետո ադրբեջանական զորքերն օկուպացրել են մարզի որոշ դիրքեր, Սոթքի հանքի աշխատանքները կաթվածահար են արել, եւ թշնամին էլ ամբողջ օրը խոսում է Գյոյչայի՝ Սեւանի ափին իր հանգրվանելու մասին: Փոխարենը, ըստ մեր զրուցակցի, խայտառակ վատ վերաբերմունքի են արժանացել Լոռվա մարզում, մինչդեռ մարզպետ Արեն Մկրտչյանն «ուրախ ավտոբուսի» ուղեւորներից է եւ ներՔՊ-ական քվեարկության ժամանակ ամենաշատ ձայներ ստացած մարզպետն է՝ մոտ 500 ձայն:

Անշափ ինքնիշխան

Երբ որ մարդիկ կորցնում են պարկեշտության եւ ամոթի վերջին նշույլները, փորձում են իրականությունը 180 աստիճանով շրջված ներկայացնել, շատ բարդ է նրանց հետ վիճելը կամ ինչ-որ բան բացատրելը: Երեկ Փաշինյանը խորհրդարանում հերթական կատաղության նոպայի մեջ էր կամ էլ հոգեբան-հիպնոթերապեւտի կեցվածք էր ընդունել եւ փորձում էր համոզել, որ մենք ազատվել ենք կախումներից, դարձել ենք անկախ ու ինքնիշխան: Իսկ առաջ հորթի պես մեզ դես-դեն էին տանում, մեր փոխարեն ամեն ինչ որոշում: Հիմա եկեք հասկանանք, թե ինչ է որոշել այս 8 տարում ինքը՝ չափից դուրս ինքնիշխան դարձած Փաշինյանը: Գուցե այդ ինքնիշխանության եւ սեփական ճակատագիրը կերտելու որոշումներից մեկը 2020-ի պատերազմն էր, որը մեր պարտությունների սկիզբը դրեց՝ հայկական տնօրինության տակ գտնվող հողեր հանձնեցինք, 5 հազար երեխա զոհվեց: Իսկ գուցե ինքնիշխանության դրսեւորումն էր, որ 20 թ. դեկտեմբերին մի օրվա մեջ բոլոր դիրքերից ինքնակամ՝ առանց կռվի, հետ քաշեցին հայկական զորքը, չնայած նոյեմբերի 9-ի հայտարարությամբ հստակ ամրագրված էր. «Կողմերը կանգ են առնում իրենց զբաղեցրած դիրքերում»: Գուցե իր ինքնիշխան որոշմամբ էր, որ թշնամուն հանձնվեց միջպետական Գորիս-Կապան մայրուղին: Կամ հենց իր որոշմամբ էր, որ ադրբեջանական զորքը գրավեց Սեւ լճի մի մասը, Սոթքից հատված, Ջերմուկի սարերը, Ներքին Հանդի գերեզմանոցը: Իսկ հնարավոր է, որ ինքնուրույն ու ինքնիշխան պետության ղեկավարի որոշմամբ երկրորդ հայկական պետությունն էթնիկ զտման ենթարկվեց, Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությունը հայտնվեց Բաքվի բանտում, Տավուշից հողեր հանձնվեցին՝ սահմանազատման անվան տակ: Հետո համաձայնեց Սյունիքից միջանցք տալու ադրբեջանական առաջարկին, հիմա էլ ուզում է Սահմանադրությունը փոխել:

ՔՊ աշխատակազմից նախընտրական ցուցակի թեկնածուներին ասվել է, որ կուսակցության կենտրոնական գրասենյակ ներկայացնեն պատգամավորության թեկնածության համար պահանջվող համապատասխան փաստաթղթերը, որպեսզի փաթեթները սկսեն կազմել՝ ԿԸՀ դիմելու համար: Մեզ ասացին, որ 100-րդ հորիզոնականից ներքեւ գտնվողներից շատերը կամուկացի մեջ են՝ դիմե՞լ, թե՞ չդիմել: Բանն այն է, որ ՔՊ-ում խոր կասկածներ ունեն, որ կարող են հունիսյան ընտրություններին մեծամասնություն ստանալ եւ հավակնել պատգամավորական մանդատի, ուստի մտածում են՝ արժե՞ ընդգրկվել ցուցակում: Ընդ որում, խոսքը գործող որոշ պատգամավորների մասին է, որոնց մտերիմները համոզում են՝ շառից-փորձանքից հեռու լինելու համար թղթերն ու դիմումը ներկայացնել, որ Փաշինյանը հիմա էլ իրենց նկատմամբ հետապնդումներ չսկսի:

ԲՈԼՈՐԸ ԼՄՎԵԼ ԵՆ ՔՎԵ ԲԵՐԵԼՈՒ ԳՈՐԾԻՆ

Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանն ակտիվ քաղաքական գործունեությամբ է զբաղված: Նա զբաղված է ՔՊ-ի համար քվեներ ապահովելով: Պարզվում է՝ բռնի տեղահանությունից հետո բանակում ծառայության անցած եւ իբրեւ իշխանության բարի կամքի դրսեւորում՝ հրատապ կարգով ՀՀ քաղաքացիություն ստացած ու ՊՆ-ում աշխատանքի տեղավորված արցախցիների ընտանիքների մի մասը մինչ օրս ՀՀ քաղաքացիություն չի ստացել: Մեր աղբյուրներն ասում են, որ այժմ կանչում են նման զինծառայողներին եւ հետաքրքրվում՝ եթե ընտանիքի անդամները մինչ օրս ՀՀ քաղաքացի չեն, ապա տվյալ ծառայողը կազատվի պաշտոնից: Թե ինչով է պայմանավորված արցախցիների նկատմամբ այս հերթական արշավը, մեր աղբյուրն իր վարկածն ունի: Նրա կարծիքով՝ Պապիկյանին թվում է, թե ՊՆ-ում աշխատանքի անցածներն արդեն դարձել են յուրային, պետությունից փող են ստանում, եւ նրանց ընտանիքներն էլ իրենց էլեկտորատն են, ուստի դրդում են, որ հրատապ կարգով լուծեն քաղաքացիության հարցերը, որ մասնակցեն ընտրություններին եւ ՔՊ-ին ընտրեն: Սակայն մեզ ասացին, որ քիչ չեն նաեւ այնպիսիները, որոնց ընտանիքները դիմել են եւ ամիսներ շարունակ քաղաքացիություն չեն ստանում:

ԱՍՏՎԱԾ ՏԱ, ՈՐ ԿԱՐՈՂԱՆԱՆՔ ՍՐԱՆ ՌԱԴ ԱՆԵԼ

Երեկ, Ազգային Ժողովի նիստում ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը վիրավորեց անկախ պատգամավոր, նախկինում իրենց թիմակից Հակոբ Ասլանյանին:

«Ասենք Ձեզ ռադ արինք»,- դիմելով իր ելույթը լսող Ասլանյանին՝ ասել է նա: Ասլանյանը տեղից անընդհատ փորձել է արձագանքել, խոսակցությանը միջամտել է նաեւ ԱԺ փոխխոսնակ Ռուբեն Ռուբինյանը: «Պարոն Ասլանյան, տեղից մի արձագանքեք, թե չէ՝ դահլիճից էլ ռադ կանենք Ձեզ»,- ասել է «բարեկրթությամբ» հատկապես աչքի ընկնող փոխխոսնակը: Հետեւելով ԱԺ նախագահի եւ փոխնախագահի բառապաշարին՝ տպավորություն ենք ստանում, որ այս մարդիկ տարրական դաստիարակություն չեն ստացել, նրանց ծնողները չեն սովորեցրել, որ փողոցային բառամթերքով չի կարելի հաղորդակցվել, այն էլ՝ տարեց մարդկանց հետ, հրապարակային վայրերում: Ցավոք, հայաստանյան Ազգային Ժողովն այս տարիների ընթացքում քաղաքակրթությանը մոտենալու փոխարեն բառացիորեն անդունդն է գլորվել, եւ այդ անկումը հատկապես նկատելի է վերջին 8 տարում, երբ համազգեստով մարդիկ նաեւ մտան դահլիճ ու սկսեցին քաշքշելով՝ պատգամավորներին դուրս հանել: «Հրապարակը» զրուցել է անկախ պատգամավոր **Հակոբ Ասլանյանի** հետ:

- Քանի որ ԲՊ-ականները Ձեզ խոսքի իրավունք չտվեցին՝ չկարողացաք հակադարձել նրանց տգեղ արտահայտություններին, հիմա խոսեք այն բառապաշարի մասին, որը կիրառեցին Ձեզ հետ խոսելիս: Կարելի՞ է երկրի թիվ մեկ ամբիոնից նման ձեւով արտահայտվել:

- Իմ նախորդ օրվա հայտարարությունները՝ անհետ կորածների ծնողների մոտ, շատ է ցավեցրել իրենց: Նրանք չկարողացան այդ ցավը տանել տղամարդու պես: Ես ասել եմ այնպիսի ճշմարտություն, որը, բնականաբար, խաթարում է իրենց պատկերացումները: Ես բոլորովին էլ չեմ նեղանում նրանցից, ովքեր ինձ համար այլեւս գոյություն չունեն: Եթե նրանք մի փոքր կարողանային գոնե պահպանել էթիկայի կանոնները, եթե մի փոքր հասկանային էսթետիկայից, կհասկանային նախ, թե ովքեր են իրենք, ինչ ճանապարհ են անցել կամ որքանով են առհասարակ կյանքում կայացել, ապա այդպես չէին խոսի մի մարդու հետ, որն արդեն 55-56 տարի աշխատել է երկրի ու հայրենիքի համար եւ աշխատել է ազնվորեն՝ ոչ մի կոպեկ չգողանալով իր երկրից: Ես իմ հայրենիքն ինձնից շատ եմ սիրում: Ինձ հետ նման կերպ խոսողները պետք է իրենց հարց տան՝ ինչ բարոյական եւ իրավական իրավունք ունեն՝ իմ մասին խոսք ասելու: Իմ արածները, իմ նվիրվածությունը՝ առ հայրենիք, իրենք անգամ իրենց երազներում չեն կարող տեսնել:

- Ռուբեն Ռուբինյանը հաճախ է նման հայտարարություններով հանդես գալիս, Լեւոն Տեր-Պետրոսյանի մասին, օրինակ: Սակայն նրա հայրը՝ Կարապետ Ռուբինյանը, առաջին նախագահի թիմակիցն էր եւ հենց նրա իշխանության տարիներին տարբեր պաշտոններ է զբաղեցրել: Եթե առաջին նախագահն ընտրակեղծարար է, թալանչի է, վատն է եւ այլն, ապա իր հայրը նույնպես այդպիսին է:

- Այո, միանշանակ: Բայց գիտեք, ես կարծում եմ, որ ընդդիմությունն ու իշխանությունն իրար լրացնում են: Այս իշխանությունը գոյություն ունի միայն այն բանի համար, որ այդպիսի ընդդիմություն կա: Երկու կողմն էլ խոցելի են: Իրականում՝ այդ երկուսն էլ նույն գծի վրա են, մեկը՝ նախկին, մյուսը՝ ներկա, դրա համար իրար լավ էլ հանդուրժում են: Տեսեք, հիմա մի օրինակ բերեմ. ես ինչ-որ բան եմ ասում, նրանք, բացի անձնական վիրավորանքներից, ինձ այլ բան չեն կարողանում ասել, միայն անցնում են անձնական դաշտ: Ինչո՞ւ: Որովհետեւ իմ կենսագրությունը մաքուր է, ես հպարտանում եմ նրանով, որ ինձ վրա ոչ մի ձեւով չեն կարողանում մի կեղտ գտնել, որովհետեւ չկա, հասկանո՞ւմ եք, իսկ դա իրենց կատաղեցնում է: Ես ի՞նչ էի ասել, ընդամենը ասել էի, որ երկու ամիս անց պետք է ռադ անենք սրանց, գուցե մի քիչ կոպիտ եմ ասել, բայց ճիշտ եմ ասել: Ի՞նչ մեծ հայհոյանք կա այդտեղ: Նրանք պետք է հեռանան, լավ, կոպիտ եմ գուցե ասել, սակայն դրանից հարցի էությունը չի փոխվում: Չի կարելի Ազգային Ժողովի թիվ մեկ ամբիոնն այդքան նսեմացնել ինչ-որ մի խոսքի համար, որն իրենց դուր չի եկել, ուղղակի մեղք են:

- Փաշինյանն ասում է, որ եթե ինքը չունենա բացարձակ մեծամասնություն, ապա սեպտեմբերին պատերազմ տեղի կունենա:

- Նա շանտաժ է անում: Այս հայտարարությունը Ժողովրդի նկատմամբ մեծ շանտաժ է: Նա հայ ժողովրդին ենթարկելով շանտաժի՝ փորձում է պահել իշխանությունը: Այս հայտարարությունից կարելի է անել հետեւություն, որ այսօրվա խաղաղ վիճակը նախապես Ալիեւի հետ պայմանավորված է, համաձայնեցված, որպեսզի այս փուլում կրակոցներ, բախումներ չլինեն, որպեսզի ինքը վերարտադրվի, իսկ հետո Ալիեւը, առանց որեւէ մարդկային զոհի, առանց որեւէ ուրիշ տեսակի կորուստների, այդ բոլորը ստանա հենց այնպես՝ ձրի, էլ ինչո՞ւ ադրբեջանական բանակը, ադրբեջանցի զինվորների կյանքը վտանգել, ինչո՞ւ իզուր նյութական կորուստներ տալ, եթե կա Նիկոլ Փաշինյանը: Ալիեւը մտածում է, որ կօգնի Նիկոլին ընտրվել, եւ այդքանով ամեն ինչ կավարտվի, ինչ ցանկանա, Նիկոլը հեշտությամբ՝ առանց մի կրակոցի կտա:

- Նիկոլ Փաշինյանն իր քարոզարշավների ժամանակ քաղաքացիների հետ վեճի մեջ է մտնում, մարդկանց վիրավորում է ու պիտակավորում:

- Ես գտնում եմ, որ նա մեծ շոու է կազմակերպում: Իսկ շոուի նպատակն այն է, որ, նախ, նա վիրավորում է մի երիտասարդ կնոջ՝ փոքրիկի ներկայությամբ, եւ հետո ամբողջ աշխարհի առաջ ներողություն է խնդրում, այն էլ՝ մի քանի անգամ: Նա փորձում է զոմբիացած մասսային հիացնել, որ ասեն՝ տեսնո՞ւմ եք, թե ինչպիսի վարչապետ ունենք, սխալվեց, հետո՝ տեսեք, թե ոնց է իր սխալներն ընդունում, բա ինչի՞ Ռոբերտն ու Սերժն այդպես իրենց սխալները չէին ընդունում:

- Իսկ ընտրությունների հետ կապված ի՞նչ ծրագրեր ունեք:

- Մենք անպայման մասնակցելու ենք ընտրություններին, մասնակցելու ենք՝ Աստված տա, որ կարողանանք սրան ռադ անել: Կոպիտ է հնչում, բայց դա եմ ցանկանում: Զարմանում եմ, որ մարդիկ ինձ երեսով են տալիս, ասելով՝ մոռացա՞ր, որ մի քանի տարի առաջ գովում էիր, դոշով պաշտպանում էիր սրանց: Ես ուզում եմ նրանց միանգամից այս հարցազրույցի միջոցով պատասխանել. հարգելիներս, սիրելիներս, այս կյանքում կգտնվի՞ մեկը, ով իր ամբողջ կյանքում չի սխալվել: Կամ այնպիսի մեկը, ով իր կյանքում իր շրջապատի անդամներից մի քանիսից առնվազն չի հեռացել: Անգամ ամուսիններն են բաժանվում իրարից, եթե չեն հասկանում իրար, հազար տարվա ընկերներն են իրարից հեռանում, ի՞նչ ողբերգություն կա այդտեղ: Ես ԲՊ-ին շնորհակալ եմ, որ Ասլանյանին վերադարձրեց Ասլանյանին: Հասկացողը կհասկանա, թե ինչ եմ ասում:

Էջը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ՆՐԱՆՔ ԵՂԵԼ ԵՆ ՕՐԻՆԱԿ, ԹԵ ԻՆՉՊԻՍԻՆ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԻՐԱԿԱՆ ՀԵՐՈՍԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Կիրակի օրը արցախցի կնոջ՝ Արմինե Մոսիյանի նկատմամբ Նիկոլ Փաշինյանի ագրեսիվ պահվածքը շատերը դատապարտեցին: Նույն օրը նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային Ժողովը՝ բոլոր խմբակցությունների ստորագրությամբ, հայտարարություն տարածեց՝ դատապարտելով «ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հակահայկական, հակապետական հայտարարությունները»:

«Արցախի Ազգային Ժողովի խմբակցություններն անընդունելի եւ դատապարտելի են համարում Նիկոլ Փաշինյանի կողմից հնչեցված պառակտիչ արտահայտությունները՝ Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցների վերաբերյալ:

Արցախցիներին միտումնավոր անվանարկելը ոչ միայն նվաստացուցիչ է, այլեւ իրականության կոպիտ խեղաթյուրում: Խոսքը հազարավոր մարդկանց մասին է, ովքեր զրկվել են իրենց հայրենիքից՝ գոյաբանական սպառնալիքի պայմաններում եւ բռնի տեղահանման ճանապարհով: Նրանց արժանապատվության հաշվին քաղաքական շահարկումն անթույլատրելի է: Երբ պետության ղեկավարի պատասխանատվություն ստանձնած գործիչը սկսում է իր ժողովրդի իրավունքները ներկայացնել որպես «անիրատեսական» կամ «մոլորություն», նա այլեւս չի զբաղվում քաղաքականությամբ, նա զբաղված է սեփական անգործությունն ու ձախողումներն արդարացնելով:

Արցախի ժողովրդի վերադարձի իրավունքը սակարկման առարկա չէ: Այն հիմնարար իրավունք է, որը չի կարող չեղարկվել որեւէ պաշտոնյայի հայտարարությամբ կամ քաղաքական նպատակահարմարությունից ելնելով:

Ավելին, անընդունելի է այն հռետորաբանությունը, որով փորձ է արվում մեղադրանք ներկայացնել մեզ՝ արցախցիներիս, Հայաստանի Հանրապետության բյուջեից ցուցաբերված «աննախադեպ» չափերի աջակցության համար: Համազգային համերաշխությունը չի կարող ներկայացվել որպես «պարտք» կամ շահարկվել որպես ճնշման գործիք:

Պահանջում ենք անհապաղ դադարեցնել նման հայտարարությունների տարածումն ու տիրաժավորումը եւ ձեռնպահ մնալ հասարակությունը պառակտող հռետորաբանությունից: Յուրաքանչյուր տեսակետ կամ արտահայտություն՝ հնչեցված պետական բարձր մակարդակում, անպայման թողնում է հետեւանքներ, իսկ այդ հետեւանքների պատասխանատվությունը պատմությունը շատ երկար է պահում:

«Ազատ հայրենիք-ՔՄԴ» խմբակցություն

«ՀՅ Դաշնակցություն» խմբակցություն

«Արդարություն» խմբակցություն

«Արցախի ժողովրդավարական կուսակցություն» խմբակցություն

«Միասնական հայրենիք» խմբակցություն

23 մարտի 2026 թ.»

Արցախի ԱԺ պատգամավոր **Մետաքսե Հակոբյանից** հետաքրքրվեցինք, թե ինչպես է կազմվել այս հայտարարությունը, որին միացել են ԼՂՀ ԱԺ բոլոր խմբակցությունները: Նա մեզ հետ զրույցում նկատեց. «Այս հայտարարությունը տարածվել է համատեղ քննարկման արդյունքում: Քաղաքական առումով հայտարարությունը պետք է լինի զուսպ քաղաքական խոսույթով, ի տարբերություն օրվա իշխանությունների կողմից գեներացվող բառապաշարի, ինչը ոչ մի առնչություն ու աղերս չունի քաղաքական պրոցեսների հետ, այն հստակ բռնաճնշման տեսակ է: Նիկոլ Փաշինյանի խոսույթը, բառապաշարն ինքնին բռնաճնշման ձեւեր են: Մտնելով նախընտրական փուլ՝ նրանք գլխապտույտ ունեն: Զարդուփշուր անելով, պառակտելով, նվաստացնելով ազգին՝ ցանկանում են հերթական անգամ զավթել իշխանությունը: Ինչո՞ւ: Որովհետեւ դեռ վաղուց, սակայն այժմ առավել, քան երբեւէ, կարող ենք ասել, որ այլեւս խոսք անգամ չի կարող լինել արդար ու թափանցիկ ընտրության մասին: Հատկապես այս փուլում նրանք հաջողել են եւ ունեն փորձ, գիտակցում են, որ հանրությանն էլ ավելի պառակտելը, մթնոլորտը սրելը, արցախցի-հայաստանցի ձեւակերպումը տալն էլ ավելի է խորացնում թշնամանքը: Սա տեղանման հարց չէ, այլ արվում է դիտավորյալ՝ թշնամանք տարածելու համար: Այս ութ տարվա մեջ առաջին անգամ իշխանության ղեկավարն իր հերթական շոուն նկարահանելուց առաջ հաշվի չէր առել, չէր ճշտել, թե ում հետ է կոնտակտի մեջ մտնում: Ղեկավարի նման կեցվածքը ցանկացած իրավիճակում խիստ դատապարտելի է, բայց այն փաստը, որ դիմացդ կանգնած է մի մարդ, որի հայրն Արցախի հերոս է, եւ դու փորձում ես նրա նկատմամբ նույնպես ատելություն գեներացնել, խիստ անընդունելի է: Արցախում չկա մի ընտանիք, որ չճանաչի Արմինեի ընտանիքին, նրա հոր հերոսապատումը, նրա անցած ճանապարհը հայտնի է մեզ՝ բոլորիս: Այդ ընտանիքն Արցախում եղել է օրինակ, թե ինչպիսին պետք է լինի իրական հերոսի ու հայրենիք ազատագրողի ընտանիքը»:

ՀՆՉ է թաքցնում նախարարությունը

Մարտի 5-ին տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին տեղեկատվական հարցում էի ուղարկել: Առաջին հարցը հետեւյալն էր. «2026թ. փետրվարի 12-ին կառավարության որոշմամբ մարզպետների աշխատակազմերին թույլատրվել է 2022-2025 թվականներին հավանության արժանացած եւ համայնքապետարանների հետ կնքված ենթակառուցվածքների զարգացման սուբվենցիոն ծրագրերի պայմանագրերում կատարել փոփոխություններ եւ դրանց ժամկետները երկարացնել մինչեւ 2027թ. հունիսի 30-ը: Դա վերաբերում է այն համայնքներին, որտեղ աշխատանքները պետք է ավարտվեին մինչեւ 2025թ. նոյեմբերի 15-ը: Այդ որոշմամբ քանի՞ ծրագրի իրականացում է հետաձգվել, որքա՞ն է դրանց ֆինանսավորման ընդհանուր չափը, այդ պայմանագրերից քանի՞սն են կնքվել 2022-ին, քանի՞սը՝ 2023-ին, 2024-ին եւ 2025-ին»:

Մարտի 11-ին ՏԿԵ փոխնախարար Ա. Դարբինյանից պատասխան եմ ստացել, որի մեջ 1-ին հարցի պատասխանը չկա, ինչ-որ ընդհանուր նախադասություններ են: Մարտի 12-ին նախարար Խուդաթյանին նոր հարցում եմ ուղարկել՝ կրկնելով նույն հարցը, քանի որ նախորդ հարցմանս չեն պատասխանել: Մարտի 19-ին ստացել եմ ՏԿԵՆ գլխավոր քարտուղարին փոխարինող Ա. Ազատյանի պատասխանը. «Հայտնում ենք, որ հարցման 1-ին կետին անդրադարձել ենք ՀՀ ՏԿԵ նախարարության 11.03.2026թ. թիվ ԱԴ-9074-2026 գրության առաջին պարբերությունում: Միեւնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ առավել մանրամասն տեղեկատվություն կարող է տրամադրել տեղեկատվությանը տիրապետողը՝ պայմանագրի կողմ հանդիսացող համայնքը կամ կապալառուն»: Հարց է ծագում՝ ի՞նչ է համառորեն թաքցնում ՏԿԵ նախարար Դ. Խուդաթյանը, որ չի ցանկանում հայտնել, թե հանրապետությունում ընդհանուր քանի սուբվենցիոն ծրագիր է երկարաձգվել մինչեւ 2027թ. հունիսի 30-ը, որքան է դրանց ֆինանսավորման ընդհանուր չափը, այդ ծրագրերից քանիսն են կնքվել 2022-ին, քանիսը՝ մյուս թվերին:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ «ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ» ՄԵՐԺՈՒՄ ԵՆ ԱՆԳԱՄ ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԸ

Երեկ Ազգային ժողովի նիստը, որի ժամանակ պատգամավորներ-կառավարություն հարցուպատասխանն էր ընթանում, տեռորիստական խմբակի հավաք էր հիշեցնում: Քանի որ ընդդիմությունը բոյկոտել էր հարցուպատասխանը, դա իշխող խմբակին եւ նրա ղեկավարին ամբողջովին սանձարձակ էր դարձրել: Նրանք նախապես գրված հարցերով, պայմանավորված հարցուպատասխաններով, պասերով օրենսդիր մարմնի ամբիոնն օգտագործեցին՝ հերթական անգամ փորձելով շանտաժ անել սեփական ժողովրդին: Հատկապես կրկնելով «եթե մեզ չընտրեք, պատերազմ կլինի» հիմար, մտացածին եւ ստոր թեզը:

ՔՊ-ական ուսապարկերը, իրար հերթ չտալով, պատերազմի խորհրդանիշ ազգակործան պատուհասին մղում էին, որ նա տարբեր վերսիաներով հնչեցնի նույն միտքը: Հավանաբար, մոնիտորինգ են արել եւ համոզվել, որ այդ թեզն ազդում է ՀՀ ընտրողի գիտակցության վրա, եւ որոշել են այս հոգեբանական տեռորը շարունակել մինչեւ ընտրությունների օրը: Նույն հարցը՝ տարբեր ձեւակերպումներով, տալիս էին, իրենց անհավասարակշիռ առաջնորդն էլ տեղ-տեղ ափերից դուրս էր գալիս, գոռգոռում, արցախցիներին կրկին փախածներ ու դավաճաններ անվանում՝ ցույց տալով, որ ինքն արդեն իսկ պատերազմ է հայտարարել սեփական ժողովրդին եւ պատրաստ է ոչնչացնել բոլոր նրանց, ովքեր իրեն չեն վերարտադրի այդ պաշտոնում:

Նիկոլ Փաշինյանը կրկին պնդեց, որ ընտրություններում իր հիմնական մրցակիցները հանդես են գալիս խաղաղությունը վերաբանակցելու դիրքերից, ինչը նշանակում է բացել պատերազմի դուռը: «Այս ընտրությանը ժողովուրդը պետք է ասի՝ ղարաբաղյան շարժումը շարունակվո՞ւմ է, թե՞ չի շարունակվում»,- ինքն իր ձեւակերպումից շատ գոհ՝ նշում էր Փաշինյանը եւ ասում, որ հունիսի 7-ին հայ ժողովուրդը պետք է ընտրություն կատարի՝ շարունակե՞լ ղարաբաղյան շարժումը, թե՞ ոչ: «Այսօր «Քաղաքացիական պայմանագիրը» միակ քաղաքական ուժն է, որ հստակ ասում է՝ «որոշել ենք, որ ղարաբաղյան շարժումը չենք շարունակում»: Մյուս բոլոր ուժերն ասում են, որ իրենք շարունակելու են ղարաբաղյան շարժումը, եւ ժողովուրդը դա պետք է որոշի: Եթե որոշում է, որ ղարաբաղյան շարժումը շարունակվում է, դա նշանակում է պատերազմ, որովհետեւ ղարաբաղյան շարժումը պատերազմ է: Եթե որոշում է, որ խաղաղություն է, ուրեմն ղարաբաղյան շարժումը չենք շարունակում՝ շատ պարզ ընտրություն է»,- հայտնագործություն արածի նման ասում էր նա:

«Կոնկրետ՝ Քոչարյան-Կարապետյան-Ծառուկյան ուժերը. մեկն ասում է՝ վերաբանակցենք, մեկն ասում է՝ ուժով պարտադրենք: Ընդհանուր տրամաբանությունը դա է: Իրենք չեն համարում, որ այն խաղաղությունը, որ կա, պետք է խնամել, տեր կանգնել: Իրենք ասում են, որ այդ խաղաղությունը պետք է վերաբանակցենք, դա բացում է էսկալացիայի ճանապարհը»,- չէր հանգստանում Արցախը հանձնած «գերագույն հրամանատարը»: Ոչ միայն ղարաբաղյան շարժումը շարունակելը, այլեւ Հայաստանի մայր օրենքի՝ Սահմանադրության նախաբանում ամրագրված Անկախության հռչակագիրը, ըստ Փաշինյանի, կոնֆլիկտ է հրահրում, քանի որ Անկախության հռչակագրում հիշատակվում է Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի միավորման մասին: Բաքուն սա որակում է Ադրբեջանի նկատմամբ տարածքային պահանջ, ուստի այն պետք է հեռացվի մայր օրենքից՝ ասում էր արցախատյացը:

Մեկ այլ ուսապարկ՝ Զուլիետա Ազարյանն էլ շեֆին հնարավորություն տվեց էմոցիաները պարպել եւ դասեր տալ այն քաղաքացիներին, ովքեր մերժում են քարոզարշավի ժամանակ Փաշինյանի բաժանած կրծքանշանները՝ Հայաստանի պլաստիկե քարտեզը՝ առանց Արցախի: Փաշինյանը նախ ստեց, թե 4-5 դեպք է հիշում, երբ մարդիկ հրաժարվել են վերցնել ՀՀ դրոշով կրծքանշանը, ապա շարունակեց. «Սա Հայաստանի ինքնիշխանության խորհրդանիշն է: Սա ՀՀ միջազգայնորեն ճանաչված տարածքն է: Երբ ժխտել ենք դա, մենք անուղղակի ասել ենք, որ Հայաստանը միջազգայնորեն ճանաչված տարածք չունի»:

Սակայն հարց տվողը, որ շատ անհանգիստ էր այդ կրծքանշանի ճակատագրով, ի տարբերություն Փաշինյանի եւ մի խումբ իշխանականների, իր կրծքին չէր կրում Հայաստանի ինքնիշխանության «խորհրդանիշը», այն դեպքում, երբ, մեր տեղեկություններով, մեկ կենտրոնից հրահանգ է իջեցվել, որ բոլորն այսուհետ կրեն պլաստիկե կրծքանշանը: Մենք ստույգ տեղեկություն ունենք, որ Փաշինյանի կերտած ինքնիշխանության կեղծ խորհրդանիշն ընդունելի չէ ՔՊ ֆրակցիայի մեծամասնության կողմից, եւ հատուկենտ ՔՊ-ականներ են այն կրում, այդ թվում՝ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, որն Աղդամը ժամանակին համարում էր իր հայրենիքը. հավանաբար, նրա եւ իշխանատենչ այլ ՔՊ-ականների հայրենիքը խիստ փոփոխական է ու շարժական:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

«ՉՓԱԽՈՂՆԵՐԸ» ԿԱ՛Մ ՄԱՀԱՑԵԼ ԵՆ, ԿԱ՛Մ ԲԱՆՏԵՐՈՒՄ ԵՆ

Նիկոլ Փաշինյանը մատ թափ տվեց եւ «փախածներ» անվանեց տեղահանված արցախցիներին, բայց ինչպե՞ս է նա վարվում այն արցախցիների հետ, ովքեր մինչեւ վերջ մնացին Արցախում՝ չփախան: Նրանք կա՛մ մահացան Արցախում, կա՛մ Բաքվի բանտերում են, կա՛մ՝ Հայաստանի: Նրանցից մեկն Ադրբեջանի օգտին լրտեսության համար 18 տարվա ազատազրկման դատապարտված Սարգիս Գալստյանն է: Արցախի հայաթափումից հետո նա կնոջ՝ Մարգարիտա Շահնազարյանի հետ մնացել էր Ստեփանակերտում, քանի որ, ինչպես Մարգարիտան է ասում՝ չեն պատկերացրել իրենց կյանքն առանց Արցախի: Գալստյանը, հիշեցնենք, 2018-2023 թթ. Լեռնային Ղարաբաղում տարբեր պաշտոններ է զբաղեցրել. Շուշիի վարչական շրջանի ղեկավարի տեղակալն է եղել, կրթության նախարարությունում՝ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ապա՝ ԼՂ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ: Նրան դատապարտել են մեկ կեղծ ինքնախոստովանության հիմքով, որը քննիչները ստացել են՝ սպառնալով, որ «կփակեն» կնոջը: Ինչո՞ւ են Փաշինյանը, նրա թիմակիցները, նրանց սպասարկող լրատվամիջոցները շարունակ թիրախավորում արցախցիներին, ո՞րն է պատճառը, դա անձնակա՞ն վերաբերմունք է, գուցե անզո՞ւսպ է ուղղակի, թե՞ այլ պատճառ կա. «Հրապարակի» հարցին Սարգիս Գալստյանի կինը պատասխանում է. «Նա անզուսպ չէ: Նա խելքից թռած չէ: Ամեն ինչ անում է հաշվարկված: Այդ բոլոր երեւույթները շեղում են մարդկանց բուն խնդրից: Նա ասում է այն, ինչ ուզում է լսել հասարակությունը: Հենց մի արցախցի է երեւում համացանցում, միանգամից տակը գրում են՝ անաղուհաց, կյարաբախցի, գնացեք ձեր երկիրը, ափսոս մեր տղերքը, որ ձեր համար զոհվել են, եւ այսպես շարունակ: Այն օրը, երբ ոչ մեկը քոմենթներում չի պիտակավորի արցախցուն, այլ բոլորը կհասկանան, որ Արցախը թիկունք ու դարպաս էր պահում, նա չի կարողանա այլեւս թշնամացնել մարդկանց, որովհետեւ չի լինի դրա համար պարարտ հող: Իսկ խոսելով միլիարդների մասին, որ բյուջե էր ուղարկվում՝ որպես միջպետական պարտք, մարդկանց մոռացնել է տալիս 3 ամիսը մեկ ստացած իրենց 4 մլրդ դրամ պարգեւավճարը»:

Սարգիս Գալստյանը փետրվարի վերջին գանգատ է ուղարկել ՄԻԵԴ՝ բողոքարկելով իր դատավճիռը:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԱՐՇԱՎՆ ՈՒ ՍԱՍՈՒՆԻ ԱՆՀԱՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ներկուսակցական քարոզարշավի անվան տակ, շաբաթ օրը ՔՊ-ականների «ուրախ ավտոբուսը» հասել էր Գեղարքունիքի եւ Կոտայքի մարզեր: Առերեւույթ ամեն ինչ նույնն էր, ուղղակի «պեռաշկուն» եւ «կուկուռուզին» փոխարինել էր «Մարտունևա կոռտոլը»: Ճանապարհին ցուցադրաբար՝ տեսախցիկի առաջ, Փաշինյանը կարտոֆիլ էր ուտում եւ Ալեն Սիմոնյանին ասում. «Վան Գոգը

«Կարտոֆիլ ուտողները» շատ հայտնի կտավ ունի»: Տեսանյութի տակ օգտատերերից մեկը գրել էր. «Իմիջիայլոց, Վան Գոգը կտրած ականջով էլ հայտնի կտավ ունի»:

Մենք տեղեկացանք, որ նրանց՝ Մարտունի այցից առաջ Մարտունու քաղաքապետ՝ ՔՊ-ական Հովհաննես Հովեյանն արդեն ամեն բան պատրաստել էր՝ ով ինչ էր խոսելու, ով էր Փաշինյանին գրկելու, ով էր առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանին ծննդյան օրվա կապակցությամբ ծաղիկներ նվիրելու: Ծաղիկներն ինքը գնել էր, տվել տաքսիստ Հոմերոսին, որ նվիրի: Մարտունեցիներն ամոթով չթողեցին իրենց քաղաքապետին՝ Փաշինյանին տեղը տեղին հերոսացրին, ասում էին, որ պատրաստ են անգամ փողոցները ՔՊ-ականների անունով կոչել: Ծեր կանայք գրկում, համբուրում էին Փաշինյանին, աստվածացնում, շնորհակալություն հայտնում, որ իրենց թագավոր Փաշինյանը խաղաղություն է բերում:

Գավառում մի քիչ այլ էր. Փաշինյանին ընդառաջ եկած բնակիչներից շատերն իրենց հոգսերով ու խնդիրներով էին մոտեցել նրան: Մի ոգեւորված գավառցի էլ Փաշինյանին ասաց. «Փաշինյան ջան, 4 ոտդ գազին կդնես ու գազից չհանես», ինչը սոցցանցերում դարձավ ասելիք՝ անասնապահ գյուղացին երեւի մոռացել էր, որ մարդը 2 ոտք է ունենում, ոչ թե՝ 4:

Իսկ Հրազդանում Փաշինյանին դիմավորելու ծանր պատասխանատվությունը ստանձնել էր ԵԿՄ նախագահ Սասուն Միքայելյանը՝ իր քաղաքապետ որդու հետ: Ի տարբերություն մարտունեցիների, հրազդանցիներն այդքան էլ ոգեւորված չէին Փաշինյանի բերած խաղաղությամբ: Մի բնակիչ, մոտենալով Փաշինյանին, ասաց. «Անհետ կորած ունենք, հիմա չգիտենք, թե ուր է: Երանի թե գերի լինի, գիտենք՝ հույս կա: Ասում եք՝ խաղաղություն լինի, թող լինի, բայց քանի՞ գերի ունենք, անհետ կորածներ կան, ո՞նց եք պատկերացնում այդ խաղաղությունը»:

Մինչ Չարենցավան հասնելը Փաշինյանը կանգ առավ Արզականում, Ալափարսում եւ Բջնիում: Բջնեցիները սեղան էին բացել Փաշինյանի համար: Սասուն Միքայելյանը Բջնիում փորձում էր հաճոյանալ Փաշինյանին, բաժակը վերցրած՝ կենացի փոխարեն մի պատմություն էր պատմում. «Լսի, վարչապետ, մի պատմություն պատմեմ, էս Վեհափառի մասին չէ, էն մյուս: Ես քաղաքապետ եմ, վոբշըմ, Վեհափառը եկավ մեր գյուղի եկեղեցին, արդեն հիվանդ էր, գնացինք հաց ուտելու: Մարզպետն էլ Հովհաննիսյան Հովիկն ա, Ալեն, ուշադիր լսի, որ թարգմանես: 4 շիշ պիվա ասի, դրին Վեհափառի դեմը, Վեհափառիս բեսամթ խմցըրի, գրկինք, դրինք ավտոն»: Բայց Փաշինյանը ռեակցիա չէր տալիս՝ ինտենսիվ ծամում էր: Սասուն Միքայելյանն իր անհամ պատմությունն ավարտեց, տեսավ, որ Փաշինյանը չի արձագանքում, ճարը կտրած, թե բա՝ «պարոն վարչապետ, Ձեր կենացը», Փաշինյանն էլ, թե՝ «տիկին Ավանեսյանի կենացը խմեք…»:

Մարտունի եւ Հրազդան այցից հետո Չարենցավանում պատկերը հիմնովին փոխվեց: Մենք գրել էինք, որ Փաշինյանի այցից առաջ ոստիկանությունն ակցիա իրականացնող պոտենցիալ ակտիվիստներին փորձել էր չեզոքացնել՝ հրավիրելով քննչական բաժին: Այդ օրը մի ակտիվիստի հետեւից 8-10 ոստիկան էր գնացել: Ակտիվիստներին ոստիկանություն էին տարել այն ժամանակ, երբ Փաշինյանը դեռ ճանապարհին էր: Կարծես թե արդեն ամեն ինչ հարթված էր՝ վտանգը չեզոքացված, բայց Չարենցավանում Փաշինյանին դեմառդեմ հայտնվեց Ազգային ժողովրդավարական բեւեռի անդամ լրագրող Արմինե Սախոյանը: Նա, հեռախոսը ձեռքին, նկարահանում էր իրենց զրույցը եւ ասում. «Ղարաբաղյան շարժումը շարունակվում է: Դուք 2022թ. հոկտեմբերի 6-ին գնացիք եւ հայտարարեցիք, որ Արցախն Ադրբեջանի տարածքային մաս է կազմում, եւ Դուք դրանով դավաճանեցիք Արցախի ժողովրդին: 2023 թվականի սեպտեմբերի 19-ին Արցախում տեղի ունեցավ մեկօրյա պատերազմ, եւ արցախցիները ստիպված եղան լքելու Արցախը, որի պատճառը Դուք եք: 2018 թվականին Դուք հայտարարեցիք՝ Արցախը Հայաստան է, եւ վերջ, խաբեցիք ինձ եւ ինձ նման հազարավոր մարդկանց, ովքեր դուրս էին եկել՝ Սերժ Սարգսյանին իշխանությունից հեռացնելու: Իսկ Դուք խաբել եք… Դուք 2022 թվականին էլ հրահրեցիք, եւ հենց հիմա ադրբեջանցիները նստած են Սեւ լճում եւ Վարդենիսում: Դուք դավաճանել եք Հայաստանի ժողովրդին, դավաճանել եք հարյուր-հազարավոր մարդկանց, ովքեր հավատացին, որ Դուք իշխանափոխություն եք անելու եւ Արցախը պահելու եք: Դուք Արցախը վաճառել եք»: Սա սառը ցնցուղ էր Փաշինյանի համար, նա փորձում էր ընդհատել կնոջ խոսքը եւ ինչ-որ հակափաստարկներ բերել: Բայց նրա բոլոր առարկություններին հանրությունը քաջ ծանոթ է, եւ Արմինե Սախոյանը հարց չէր տալիս, այլ տեսակետ էր շարադրում, իսկ Փաշինյանը մթնած դեմքով ունկնդրում էր:

ՔՊ ներկուսակցական քարոզարշավը վերջացավ Չարենցավանից պատգամավորի թեկնածու, ՔՊ-ական Նարեկ Բաբայանի քեռուն պատկանող «Սաֆարի հոլ» հարսանյաց սրահում ուտուշ-խմուշով:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՋՐՀԵՂԵՂԻՑ 2 ՏԱՐԻ ԱՆՑ ԱՂԵՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԶԳԱԼԻ ՄԱՍԸ ՎԵՐԱՑՎԱԾ ՉԷ

2024թ. մայիսի 27-ի ջրհեղեղը մեծ վնասներ պատճառեց մարդկանց եւ տնտեսությանը՝ ավերածություններ գործեց, ինչի հետեւանքով Լոռու եւ Տավուշի մարզերում 2-ական զոհ եղավ: 2026թ. մարտի 17-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել. «2024թ. մայիսի 27-ի ջրհեղեղից տուժած ֆիզիկական եւ իրավաբանական անձանց պետական աջակցությունն ավարտվե՞լ, թե՞ շարունակվելու է: Եթե շարունակվելու է՝ ե՞րբ, ո՞ւմ է այն տրվելու: Ջրհեղեղից տուժածներին մինչեւ հիմա որքա՞ն ֆինանսական աջակցություն է տրվել»:

Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «2024թ. մայիսի 27-ի դրությամբ ջրհեղեղից տուժած ֆիզիկական եւ իրավաբանական անձանց աջակցության հետ կապված՝ հանրապետական հանձնաժողովին ներկայացված ակտով անհատական բնակելի տներին պատճառված ընդհանուր վնասի գումարը՝ վերանորոգման, առաջնային գույքի եւ բնակարանի գնման վկայագրի համար, կազմել է 89 մլն 702 հազար 900 դրամ: Վնասվել է 32 տրանսպորտային միջոց, որից 29-ին տրվել է 32,9 մլն դրամ ֆինանսական աջակցություն: Տուժել է 307 գյուղացիական տնտեսություն: Նոյեմբերյան համայնքում՝ 292, Դիլիջան համայնքում՝ 15, որոնց փոխհատուցման նպատակով տրված գումարը կազմել է 48 մլն 665 հազար դրամ: Տուժել է 30 տնտեսվարող, 15-ը՝ Նոյեմբերյանում, 10-ը՝ Դիլիջանում, 5-ը՝ Իջեւանում: Ոչ բնակելի շինություններին պատճառված վնասի համար ֆինանսական աջակցություն են ստացել Դիլիջան համայնքում 9 շահառու, Նոյեմբերյանում՝ 125: Ընդհանուր տրվել է 18 մլն 850 հազար դրամ գումար, իսկ երկրորդ փուլով Նոյեմբերյան համայնքի գյուղացիական տնտեսություններին պատճառված վնասի համար տրամադրվել է 412 մլն 58 հազար դրամ: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ շարունակվելու մասին տեղեկատվություն չունենք»:

2024թ. ջրհեղեղից գրեթե 2 տարի է անցել, սակայն այդ ջրհեղեղից միջպետական ավտոճանապարհի Դիլիջան-Իջեւան հատվածում վնասված ճանապարհաեզրերը չեն վերականգնվել: Մարտի 5-ին տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին հարցում եմ արել, թե այդ հատվածների վերականգնումը երբ է իրականացվելու, որքան գումար է նախատեսված այդ նպատակով: ՏԿԵ նախարարի տեղակալ Ա. Դարբինյանի ստորագրությամբ ստացված պատասխանում նշված է. «Մ4 Երեւան-Սեւան-Իջեւան-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Դիլիջանից մինչեւ Հ-30 ավտոճանապարհի հետ հատման կետ հատվածում ջրհեղեղի հետեւանքով ողողված եւ փլուզված 10 տեղամասերի վերակառուցման աշխատանքներն իրականացվելու են «Մոստ Կոնտրակտ» ՍՊԸ-ի կողմից: Կառավարության համապատասխան որոշմամբ 526 մլն 518 հազար դրամ միջոցներ են նախատեսվել աշխատանքների կատարման համար, աշխատանքները բարենպաստ եղանակային պայմանների դեպքում կմեկնարկեն»:

2024թ. մայիսի 27-ի ջրհեղեղից վնասվել, շահագործումից դուրս է եկել Խաշթառակ գյուղի կամուրջը, հիմա կառուցվում է հիմնական նոր կամուրջ: Մարտի 5-ին նախարար Դ. Խուդաթյանին հարցում եմ արել. «Ե՞րբ է սկսվել Խաշթառակ գյուղի հիմնական կամրջի կառուցումը, ո՞ր կազմակերպությունն է այն իրականացնում, ո՞վ է աշխատանքների պատվիրատուն, որքա՞ն գումար է նախատեսված ծրագրով, ի սկզբանե ե՞րբ էր նախատեսված ծրագրի ավարտը, ե՞րբ այն կավարտվի»: ՏԿԵ նախարարի տեղակալ Ա. Դարբինյանի ստորագրությամբ պատասխան եմ ստացել. «Տ-10-26, /Մ4/-Խաշթառակ-Լուսահովիտ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ0+050-ում գտնվող փլուզված կամրջի փոխարեն կառուցվում է պողպատե ֆերմաներով նոր մետաղական կամուրջ: Աշխատանքները մեկնարկել են 2025 թվականին: Կառուցող ընկերությունը «Թունել Սադ Արիանան» է: Ավարտը նախատեսվում է 2026 թվականի մայիսին: Պատվիրատուն ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունն է»:

Նախարարությունը չի պատասխանել այն հարցին, թե որքան գումար է նախատեսված այդ ծրագրով: «Թունել Սադ Արիանա» ՓԲԸ-ն իրանական շինարարական ընկերություն է, որը հիմնականում զբաղվում է ենթակառուցվածքային խոշոր նախագծերով, այդ թվում՝ ճանապարհների, թունելների եւ հիդրոտեխնիկական կառույցների շինարարությամբ: Հիմա սարերի ձյունը սկսել է հալվել, առաջիկայում մեծ է վտանգը, որ ձյան հալոցքի ու գարնանային հորդ անձրեւների հետեւանքով Դեբեդ ու Աղստեւ գետերը կարող են վարարել, դուրս գալ հունից, ավերածություններ գործել: Մինչդեռ 2 տարի առաջվա՝ 2024թ. մայիսի 27-ի ջրհեղեղի հետեւանքների զգալի մասը դեռ վերացված չէ:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՇԱՆՏԱԺ

ՈՐՏԵՂԻՑ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԳԻՏԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ ՍՊԱՍՎՈՂ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ուիկոլ Փաշինյանը սպառնում է պատերազմով՝ հստակ նշելով, որ իր չընտրվելու դեպքում այն կսկսվի սեպտեմբերին: Շատերը զարմացած են նման տեղեկացվածությունից. Փաշինյանը որտեղից գիտի Ալիեւի պլանների մասին, այն էլ՝ նման ճշգրտությամբ: Փաշինյանը, պարզվում է, գիտի նաեւ, թե ինչով է ավարտվելու նոր պատերազմը. նա նշում է՝ «արյունահեղ պատերազմ», տարածքային կորուստներով եւ հնարավոր է՝ պետության վերջնական կործանմամբ: Պատերազմի արդյունքների մասով ամեն ինչ պարզ է. Փաշինյանն իր պաշտոնավարման ընթացքում, պարտությունից ու կորուստներից բացի, ուրիշ բան չի եղել, ինքը հաղթանակ չի տեսել, հետեւաբար՝ նոր պատերազմի այլ արդյունք չի էլ կարող կանխատեսել: Ինչ վերաբերում է պատերազմը սկսվելու ամսաթվի մասին ունեցած տեղեկությանը, նորմալ երկրներում նման հարցերով զբաղվում է արտաքին հետախուզության ծառայությունը, բայց Հայաստանի դեպքում դա բացառված է, քանի որ Քրիստինե Գրիգորյանի ղեկավարած հիմնարկը ներքաղաքական հարցերից, նախընտրական քարոզարշավում իշխանության թեզերն առաջ տանելուց բացի, ուրիշ որեւէ գործով զբաղված չէ: Այդ դեպքում որտեղից նման հստակ տեղեկատվություն՝ նախապատրաստվող պատերազմի մասին:

Փաշինյանը կարող էր իր պաշտոնավարման դառը եւ ողբերգական փորձի վրա վախ ունենալ սեպտեմբեր ամսվանից առհասարակ՝ Փաշինյանի պաշտոնավարման ընթացքում Ադրբեջանը երեք պատերազմ է վարել Հայաստանի Հանրապետության դեմ, եւ երեքն էլ եղել է սեպտեմբերին: Առաջինը՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին (44-օրյա պատերազմը), երկրորդը՝ 2022 թվականի սեպտեմբերի 12-ին,՝ երբ Ադրբեջանը հարձակում սկսեց միանգամից Հայաստանի չորս՝ Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի եւ Արարատի մարզերի ուղղությամբ, Հայաստանին պատճառելով մարդկային եւ տարածքային կորուստներ: Եվ երրորդը՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ին, երբ երկարատեւ շրջափակումից հետո հարձակվեց Արցախի՝ հայկական վերահսկողության տակ գտնվող հատվածի վրա, վերջնականապես գրավելով եւ հայաթափելով հայկական Արցախը: Հնարավոր է, որ Փաշինյանը վախով եւ սարսափով է սպասում յուրաքանչյուր սեպտեմբերին՝ մտավախություն ունենալով, որ այդ ամսին Ադրբեջանը կարող է նոր պատերազմ սկսել:

Բայց կա ավելի ռացիոնալ բացատրություն, թե ինչու է նա հենց սեպտեմբերին կանխատեսում նոր պատերազմ, եւ այդ ամսաթիվն օդից վերցված չէ: Ամենայն հավանականությամբ, Փաշինյանը եւ նրա իշխանության ներկայացուցիչները՝ նրանք, ովքեր բանակցում են Ադրբեջանի եւ Թուրքիայի ներկայացուցիչների հետ, որոշակի խոստումներ են տվել այդ երկրներին եւ պարտավորվել, որ ընտրություններից շատ չանցած՝ մինչեւ սեպտեմբեր, այդ խոստումները կամ, ավելի ճիշտ՝ պարտավորությունները կիրականացնեն: Ադրբեջանն էլ վերջնաժամկետ է տվել, որ եթե մինչեւ սեպտեմբեր փաշինյանական իշխանությունը կամավոր չկատարի իր ստանձնած պարտավորությունները, ապա իրենք դրան կհասնեն պատերազմի միջոցով: Թե ինչ պարտավորությունների մասին է խոսքը, կարելի է միայն ենթադրել՝ նկատի ունենալով Ադրբեջանի նախագահի հնչեցրած հրապարակային պահանջները՝ սկսած իրենց պատկերացած եւ խմբագրած Սահմանադրության ընդունումից մինչեւ միջանցքի տրամադրում եւ 300 հազար ադրբեջանցիների վերադարձի հնարավորության ապահովում:

Փաշինյանը հենց դրա համար է վստահաբար պնդում, որ եթե պարտվի, դա կհանգեցնի խաղաղության պայմանների ռեւիզիայի եւ նոր պատերազմի. Ադրբեջանը կարող է պատերազմը սկսել միանգամից՝ համարելով, որ այն իշխանությունը, որն իր պայմաններն ընդունել է եւ պարտավորվել կատարել, այլեւս չկա, կամ կարող է այդ նոր պահանջներն առաջադրել Հայաստանի նոր իշխանությանը, նույն պայմանով, որ դրանք պետք է կատարվեն մինչեւ սեպտեմբեր, եւ եթե նոր իշխանությունը հրաժարվի դրանք կատարել մինչեւ վերջնաժամկետի ավարտը, պատերազմ սկսի:

Այսպիսով մենք գործ ունենք մի իշխանության հետ, որը գտնվում է ադրբեջանական շանտաժի տակ եւ հայ հասարակությանը եւս ստիպում է մտնել այդ շանտաժի տակ, կատարել այդ շանտաժի պայմանները: Սա ցույց է տալիս, որ Փաշինյանից ազատվելն օրախնդիր պահանջ է: Այս մարդը գտնվում է ադրբեջանական թելադրանքի տակ, իր վրա վերցրել է որոշակի պարտավորություններ եւ իշխանությունը պահելու դեպքում չի կարողանալու հրաժարվել դրանք կատարելուց: Նա նոր բան բանակցելու կամ բանակցածի պայմանները փոխելու հնարավորություն չունի, իրենից պահանջելու են կատարել խոստացածը: Ինչ վերաբերում է նոր իշխանության պարագայում ադրբեջանական սպառնալիքներին, ապա դրանք կարող են լինել, բայց Հայաստանի շուրջ նոր աշխարհաքաղաքական իրավիճակ է ձեւավորվում՝ հոգուտ Հայաստանի: Ադրբեջանն Իրանին էլ էր սպառնում պատերազմով, բայց ստիպված եղավ հրթիռների փոխարեն մարդասիրական օգնություն՝ սնունդ եւ դեղորայք ուղարկել Իրան: Հայաստանը տրվում է Ադրբեջանի շանտաժին, քանի որ փաշինյանական իշխանությունը փչացրել է հարաբերությունները բոլոր հնարավոր դաշնակիցների հետ:

Հայաստանին պետք է նոր բանակցող, մարդիկ, ովքեր կաշկանդված չեն Ադրբեջանին տված խոստումներով, մարդիկ, ովքեր կարող են իրականացնել ինքնուրույն, Հայաստանի շահերից բխող արտաքին քաղաքականություն, վերականգնել դաշնակցային ոչնչացված կապերը եւ ապահովել հուսալի ու արժանապատիվ խաղաղություն: Թե չէ ադրբեջանական շանտաժի գերի իշխանության պայմաններում Հայաստանում կարող է սեպտեմբերին պատերազմ չլինել, բայց խաղաղ կյանքն էլ կվերածվի ամենօրյա դժոխքի՝ անվերջ սարսափներով եւ անվերջանալի ստորացումներով:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԵՐԲԵՔ ԱՅՆՔԱՆ ՉԵՆ ՇԱՂԱԿՐԱՏՈՒՄ, ՈՐՔԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԱՌԱՋ

«Պատերազմ, թե՞ խաղաղություն» թեմայով այս «դուռակ» բանավեճը վաղ թե ուշ սկսելու էր աշխատել այն սանձազերծողների դեմ: Իսկ սանձազերծել է ոչ այլ ոք, քան ՀՀ վարչապետի աթոռին դրված մեկը, որի անվան հետ են կապվում վերջին 8 տարիների բոլոր պատերազմները: Ի դեպ, բոլորն էլ՝ իր գերագույն գլխավոր հրամանատարությամբ եւ բոլորն էլ՝ անհաջող: Անձամբ ես կնախընտրեի Լեւ Տոլստոյի ձեւակերպումը՝ «Պատերազմ եւ խաղաղություն»: Այս պարագայում վերջին 8 տարիների պատերազմների «հրձիգն» առնվազն կկարողանար մանեւրել եւ հանրությանը բացատրել, թե՝ գիտեք, ժողովուրդ ջան, պատերազմները հենց այնպես չեն ծագում, դրանք ունենում են իրենց պատճառները, դրանցով աշխարհաքաղաքական հարցեր են լուծվում եւ այլն, եւ այլն: Ու նաեւ, ժողովուրդ ջան, խաղաղությունն էլ ծառերի վրա չի աճում եւ առանց պատճառների չի լինում: Իսկ ինքն ի՞նչ է անում… Մարդկության պատմության առաջին օրից հայտնի երկու հակոտնյա բաներ է հակադրում իրար եւ փորձում հանրությանը համոզել, որ իրենից է կախված՝ պատերազմ կլինի, թե՞ խաղաղություն: Վերարտադրվի՝ խաղաղություն կլինի, չվերարտադրվի՝ պատերազմ… Հենց այդպես:

Այո, մարդկության պատմությունը, ասում են, պատերազմների պատմություն է: Բայց եւ մարդկությունը դեռ չի ծնել մեկին, որ հավասարապես թե՞ պատերազմ բերող է, թե՞ խաղաղություն: Հին դիցաբանություններում անգամ պատերազմի եւ խաղաղության աստվածներն էին տարբեր: Հիմա վերջին 8 տարում մի քանի պատերազմ բերած էս մարդը, ինքզինքը խաղաղության աստված է հռչակել եւ եկել, մեզ ասում է, որ եթե ինքը չվերարտադրվի, 1-2 ամսից պատերազմ կսկսվի: Նկատենք, սակայն, որ հակառակ պնդումը չի անում, չի ասում՝ ժողովուրդ ջան, որ ես վերարտադրվեմ, 1-2 ամսից պատերազմ չի լինի: Ուղղակի լենինյան ոճով հայտարարում է, թե ինքը գնում է խաղաղության ճանապարհով: Եվ ես, որ նրան կողքից նայելու բոլոր հնարավորություններն ունեմ, տեսնում եմ իմ առջեւ կանգնած մի շառլատանի, որ խաղաղությունը մենաշնորհում է իր անձին, իսկ պատերազմը ներկայացնում որպես քաղաքական հակառակորդների սիրած զբաղմունք: Սա ճիշտ չէ: Այդպես չի կարելի, մանավանդ որ մի քանի պատերազմ ես հրահրել, իսկ խաղաղությունն այդպես էլ չի եկել:

Իսկ ի՞նչ են ասում քաղաքական հակառակորդներն այս կապակցությամբ: Մեծ հաշվով, ասելու բան էլ չունեն: Նրանց փոխարեն փաստերն են աղաղակում՝ Արցախի ազատագրական պայքարի հաղթանակից հետո 30 տարի Հայաստանն ապրել է խաղաղության մեջ, իսկ շառլատանը՝ եկած-չեկած, պատերազմ բերեց: Ի՞նչ ավելացնես այս փաստին: Լավ, ենթադրենք, պատերազմ է՝ եղել է: Բա մարդ իր բերած պատերազմում փառավորապես պարտվելուց հետո, առանց խաղաղության համաձայնագիր գլուխ բերելու մեծ-մեծ կխոսի՞: Ի՞նչ ես թողնելու քեզնից հետո… Պատերազմական վիճակ, որ, նայած հանգամանքների, ամեն պահի կարող է բորբոքվել:

Պառակտված հանրությունը դեռ կացուկամի մեջ է: Մի կեսը, իհարկե, հավատում է շառլատանին, վախենում իշխանափոխության հեռանկարից, ու չի բացառվում, որ վաղը լցվեն ընտրատեղամասեր՝ քվեարկելու «նաղդ» խաղաղություն խոստացող կապիտուլյանտի օգտին: Լավ է, իհարկե, որ այդ խավն այսօր փոքրամասնություն է, բայց վատ է, որ դեռ կան քաղաքացիներ, որ այս 8 տարում այդպես էլ չհասկացան, թե ում հետ գործ ունեն՝ ի դեմս օրվա իշխանությունների: Ազգակործան պատուհասների 8 տարվա դատարկախոսությունը նրանց մեջ ոչինչ չի փոխել: Նույն ուսապարկերն են, պարզապես իրենք խորհրդարանում կամ կառավարությունում չեն, փողոցում են մնացել ու վարչապետ չեն դարձել: «Պատերազմ, թե՞ խաղաղություն» «դուռակ» խոսույթը սրանց համար է, կարծեմ, քանզի արժանապատիվ եւ պատճառաբանված խաղաղությունը խաղաղության մասին օդի տատանումից չեն տարբերում:

ՀԳ. *Քանի մենք-մերոնցով ենք, մի հարց տամ, միայն թե ազնվորեն պատասխանեք: Դուք կուզենայի՞ք, որ հաջորդ պատերազմում ՀՀ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարը լիներ մի քանի պատերազմում պարտված անձնավորությունը: Ես կասեի՝ Աստված մի արասցե:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Ո՛Չ ԼԻՑԵՆԶԻԱ ՈՒՆԻ, Ո՛Չ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ, ԲԱՅՑ ԳՈՐԾՈՒՄ Է

Լոռու մարզի Վարդաբլուր համայնքում կառավարություն-համայնք համաֆինանսավորմամբ 2025-ին մանկապարտեզ է կառուցվել:

Շինարարությունը սկսվել է 2023-ին: 2025 թ. նոյեմբերին Լոռու մարզպետ Արեն Մկրտչյանը մանկապարտեզի բացումն է արել եւ հպարտացել, թե 13 ամիս չբացվող հաստատությունը բացվեց 7 օրում:

Համայնքի խնդիրներով մտահոգ բնակիչներից մեկը հարցում էր ուղարկել քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմին՝ պարզելու, թե մանկապարտեզն ունի՞ շահագործման թույլտվություն: Տեսչականը պատասխանել էր, որ Վարդաբլուրի մանկապարտեզը չունի ընդունող հանձնաժողովի կողմից տրված ավարտական ակտ եւ շահագործման թույլտվություն:

Մենք գրավոր հարցում ուղարկեցինք Լոռու մարզպետին՝ Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր բնակավայրում կառուցվող մանկապարտեզին ընդունող հանձնաժողովն ավարտական ակտ ու շահագործման թույլտվություն չի տվել, ինչ հիմքով է այժմ մանկապարտեզը գործում: «Հաշվի առնելով այն, որ Ձեր կողմից նշված մանկապարտեզի եւ մարզում կառուցված մի շարք այլ մանկապարտեզների կառուցման, հիմնանորոգման կամ վերանորոգման աշխատանքների պատվիրատուները հանդիսանում են համայնքները, ավարտական ակտի եւ շահագործման թույլտվության վերաբերյալ տեղեկատվությունը կարող է տրամադրել համապատասխան համայնքը»:

Փորձեցինք Գյուլագարակ խոշորացված համայնքի ղեկավար Խաչիկ Վարդանյանից պարզել՝ եթե մանկապարտեզը տեսչական մարմնի կողմից չի ստացել ավարտական ակտ եւ շահագործման թույլտվություն, ինչ հիմքով է գործում: Վարդանյանը մեր զանգերին չպատասխանեց: Նույն հարցն ուղղեցինք նրա խորհրդական Մարինե Ալեքսանյանին: «Զանգեք համայնքի ղեկավարին»: Ասացինք, որ երկու օր է՝ փորձում ենք կապ հաստատել Խաչիկ Վարդանյանի հետ, սակայն նա մեր զանգերին չի պատասխանում: «Կարող է երեք օր էլ Ձեր զանգերին չպատասխանի, խոշորացված համայնքի ղեկավար է, Դուք պատկերացնո՞ւմ եք, թե ինչ պաշտոն է ինքը զբաղեցնում: Իմ համարը որտեղի՞ց եք վերցրել, երրորդ կողմին դատ է հասնում, որ համարս տվել է»,- ագրեսիվացավ համայնքապետի խորհրդականը, որին երեւի թվում է, թե ինքը Թրամփի օգնականն է, իր ղեկավարն էլ Թրամփին հավասար պաշտոնյա է:

Այս հարցի շուրջ զրուցեցինք «Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ նախագահ **Գեւորգ Քոթանջյանի** հետ: «Ոչ միայն նշված մանկապարտեզը, այլեւ նմանատիպ մանկապարտեզները, ըստ երեւույթին, բազում են, այդ թվում՝ նաեւ Վանաձորի թիվ 8 մանկապարտեզը, որը չունի ավարտական ակտ, բայց շահագործվում է: Ըստ էության, խնդիր է առաջանում՝ կամ տվյալ մանկապարտեզում պետք է հարկադիր պարապուրդ գործի, աշխատողները ստանան աշխատավարձ, բայց գործի չգնան, երեխաներն էլ՝ մանկապարտեզ, որովհետեւ ցանկացած գործառույթ կարող է տեւել մոտ 2 տարի: Այստեղ կա լուրջ խնդիր, քանի որ դիտարկումներ ենք արել, հասկացել ենք մի բան, որ այն մանկապարտեզները, որոնք անվտանգային առումով չունեն խնդիր, իրենց շահագործումը ներքին կարգով թույլատրվում է: Զուգահեռ դրան, մի շարք մանկապարտեզներ ամբողջ մարզում եւ հանրապետությունում չունեն լիցենզիաներ, որը պարտադիր օրենքի պահանջ է: Այստեղ խնդիրը ոչ թե ավելի շատ առանց ավարտական ակտի գործելն է, այլ՝ այն, որ մանկապարտեզը չունի ԿԳՄՍՆ-ի տրամադրած լիցենզիա: Ըստ երեւույթին, ամենամեծ խնդիրը դա է, որովհետեւ այստեղ մենք չունենք հստակ տեղեկատվություն, թե տվյալ մանկապարտեզը երեխաների հաճախելու համար ինչքանով է պիտանի: Այն, որ ավարտական ակտը տեխնիկապես կարեւոր է՝ շատ կարեւոր է, բայց փորձը ցույց է տալիս, որ շահագործումն այս դեպքում երբեւէ անվտանգային խնդիր չի առաջացնում: Այլ բան է, որ անվտանգային խնդիր առաջացրել է այն մանկապարտեզներում, որտեղ լիցենզիա չի եղել՝ սկսած սննդի մատակարարումից, հիգիենայի պահպանությունից մինչեւ մնացած ամեն ինչ: Այս պահին մենք չգիտենք՝ հավակնո՞ւմ են ունենալ երբեւէ լիցենզիա, թե՞ ուղղակի գումար է՝ ծախսվել է, թե՞ հետագայում խոտան տարածքներ են դառնալու այդ մանկապարտեզները»: Ավարտական ակտն ո՞ւմ կողմից է տրվում: «Համայնքապետարանը պետք է գրություն ուղարկի քաղաքաշինության, հակահրդեհային տեսչական մարմին: Տեսչական մարմինը գալիս, ստուգում է անում: Չի կարող լինել մի շինարարություն, որտեղ որ չլինեն նվազագույն թերություններ: Մինչեւ թերությունները վերացված չլինեն, տեսչական մարմինը չի կարող ստորագրել ավարտական եզրակացությունը: Դրանից հետո պետք է համայնքն ընդունի մանկապարտեզն իր բալանսում եւ ավագանու նիստի միջոցով տրամադրի ՀՈԱԿ-ին՝ որպես օգտագործման գույք»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հակամարտության կարգավորման սցենարներ

Չնայած ռմբահարումները շարունակվում են, սակայն մերձավորարեւելյան էսկալացիայի մասով արդեն սկսել է քննարկվել կարգավորման երեք սցենար.

1. Միջուկային գործարքի համաձայնագիր, որը համարվում է ժամանակավոր տարբերակ: Դա լինելու է տեխնիկական համաձայնագիր, որը զսպելու, սահմանափակելու է Իրանի միջուկային ծրագիրը՝ հակահիրանական սանկցիաների մասնակի չեղարկման, մեղմացման դիմաց: Սա, սակայն, հարցի վերջնական լուծում չի համարվում, քանի որ չի լուծում գլխավոր խնդիրը՝ ռեգիոնում ամերիկյան ռազմական ներկայությունը: Թեհրանի համար այն, ըստ ամենայնի, ընդունելի չէ: Իրանական կողմը դա համարում է ԱՄՆ-ի կողմից լարված թակարդ, որը թույլ կտա Վաշինգտոնին՝ իրականացնել ուժերի վերախմբավորում:

2. Հակամարտության սառեցում, որը նշանակում է, որ Վաշինգտոնը փաստացի ընդունում է, որ իրավիճակը փակուղային է: Այս դեպքում՝ Միացյալ Նահանգներն իր ուժերը մասամբ դուրս է բերում ռեգիոնից կամ կրճատում է ակտիվությունը Մերձավոր Արեւելքում: Իրանն էլ իր հերթին պարտավորվում է զսպել իր պրոքսիներին, զերծ մնալ միջուկային ծրագրի էսկալացիայից՝ մինչեւ ԱՄՆ հաջորդ նախագահական ընտրությունները: Դա խաղաղության պայմանագիր չէ, այլ ջենթլմենական համաձայնություն՝ գեոպոլիտիկ ծանրքաշայինների միջեւ, ովքեր իրապես հոգնել են արդեն հյուծիչ պատերազմներից:

3. Բանակցությունները խափանվում են: Ամերիկյան կողմն Իրանի պահանջներն իր համար ստորացուցիչ է դիտում: Միջամտում է նաեւ Իսրայելը՝ հերթական սադրանքով փորձելով վիժեցնել ցանկացած պրոցես, որը կարող է գնալ Վաշինգտոնի եւ Թեհրանի միջեւ, ինչպես արել է քանիցս: Այդ դեպքում արդեն ռեգիոնին սպասվում են տարիների լարվածություն եւ նորանոր էսկալացիաներ: Խնդիրը Մերձավոր Արեւելքում ուժերի նոր հավասարակշռության ձեւակերպումն է, եւ դա հասկանում են բոլորը եւ, ըստ այդմ, ձգտում են գոնե պահպանել իրենց դիրքերը կամ դուրս գալ նվազագույն կորուստներով:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻՆ ՈՒ ՆՐԱ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻՆ 2019-ԻՑ ԴԱՏՈՒՄ ԵՆ

Սահմանամերձ Արծվաբերդ գյուղի բնակիչ Վոլոդյա Ուզունյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2008-ից հանդիսանալով Արծվաբերդ համայնքի ղեկավարը, համայնքի բնակիչներին տրամադրված աշնանացան ցորենի սերմացուի դիմաց համայնքապետարանի աշխատակցի կողմից հավաքագրված եւ իր վստահությանը հանձնված գումարի մի մասը՝ 22 միլիոն 469 հազար դրամ գումարը յուրացրել է՝ պետությանը պատճառելով առանձնապես խոշոր չափերով վնաս: Բացի այդ, Վ. Ուզունյանը, «նպատակ ունենալով թաքցնել իր կողմից առանձնապես խոշոր չափերով գումար յուրացնելու հանգամանքը, շահադիտական նպատակով պաշտոնական դիրքն օգտագործելով, իրեն հանձնված տեղեկանքներում մտցրել է ակնհայտ կեղծ տեղեկություններ՝ 2013-2015 թթ. Արծվաբերդ համայնքի հողօգտագործողներին հատկացված սերմացուների պարտքերի վերաբերյալ», եւ դրանք հանձնել Տավուշի մարզպետարան:

Այս քրեական գործով դատավարությունը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում սկսվել է 2019թ. դեկտեմբերի 30-ին: 2023թ. փետրվարի 21-ին դատավոր Նարեկ Բաղալյանը որոշել է Վոլոդյա Ուզունյանի քրեական գործը՝ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով («Յուրացնելը կամ վատնելը, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով») եւ 314-րդ հոդվածի 1-ին մասով («Պաշտոնեական կեղծիքը»), ըստ ընդդատության ուղարկել Հակակոռուպցիոն դատարան: 2026թ. փետրվարի 2-ին հակակոռուպցիոնի դատավոր Գիվի Հովհաննիսյանը որոշել է Ուզունյանի պաշտպան Ներսես Չիլինգարյանի միջնորդությունը բավարարել՝ նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնել՝ վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով, Ուզունյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ «ստորագրություն չհեռանալու մասին», վերացնել: Ինչպես նաեւ՝ վերացնել Վ. Ուզունյանի շարժական եւ անշարժ գույքերի վրա դրված կալանքը: Իսկ Տավուշի մարզի դատախազի տեղակալ Վ. Սարգսյանի ներկայացրած քաղաքացիական հայցը՝ Վ. Ուզունյանից, հօգուտ ՀՀ պետբյուջեի, 22 միլիոն 469 հազար դրամ բռնագանձելու մասին, թողնել առանց քննության եւ քրեական գործի վարույթը կարճել:

Այդ որոշումը չի բողոքարկվել, մտել է օրինական ուժի մեջ: Արծվաբերդի բնակիչներին վերոհիշյալ աշնանացան ցորենը մատակարարած «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի (որը կառավարության 01.07.2021թ. որոշմամբ վերանվանվել է «Գյուղատնտեսական հետազոտությունների եւ հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ) ներկայացուցիչը քաղաքացիական հայցադիմում է ներկայացրել դատարան՝ ընդդեմ Վոլոդյա Ուզունյանի, երրորդ անձանց՝ Ծովինար Ուզունյանի, Անուշ Ուզունյանի, Սահակ Ուզունյանի, Աննա Ուզունյանի եւ Սեւակ Ուզունյանի՝ ընդհանուր սեփականություն հանդիսացող անշարժ գույքից բաժին առանձնացնելու, հրապարակային սակարկությունների միջոցով վաճառելու վերաբերյալ: 2021թ. օգոստոսի 30-ին այս քաղաքացիական գործն ընդունվել է Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի վարույթ: 2025թ. դեկտեմբերի 18-ին Տավուշի մարզի դատավոր Նարինե Անանյանը վճռել է կարճել այս քաղաքացիական գործի վարույթը՝ երրորդ անձ հանդիսացող Աննա Ուզունյանի եւ Սեւակ Ուզունյանի մասով, եւ հաստատել հայցվոր «Գյուղատնտեսական հետազոտությունների եւ հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ի, Վոլոդյա Ուզունյանի եւ մյուսների միջեւ 2025թ. դեկտեմբերի 8-ին կնքված հաշտության համաձայնությունը, որով պարտապանը պարտավորվում է ՊՈԱԿ-ի հաշվեհամարին վճարել 1 միլիոն 178 հազար 114 դրամ գումար: Նաեւ՝ Վոլոդյա Ուզունյանի, Ծովինար Ուզունյանի, Անուշ Ուզունյանի եւ Սահակ Ուզունյանի մասով կարճել քաղաքացիական գործի վարույթը՝ կողմերի միջեւ կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու հիմքով: Դատական ծախսերի հարցը համարել լուծված՝ ըստ հաշտության համաձայնության, իսկ հաշտության համաձայնությամբ պատասխանողից հօգուտ հայցվորի բռնագանձման ենթակա 150 հազար դրամ փորձաքննության ծախսը հայցվորից բռնագանձել՝ հօգուտ «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՈՒՅՍ

ԴԱՐՁԻ ԵԿԱԾ «ՆԻԿՈԼԱԿԱՆԻ» ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հարմացած եմ, որոշել եմ զարմանքս կիսել ձեզ հետ: Օրերս ինձ մոտեցավ «նիկոլական կողմնորոշմամբ» մի ընկեր, որը 7 տարի շարունակ հավատում է Նիկոլին, սիրում է նրա վարած քաղաքականությունը, բայց սկսեց խոսել մտահոգ, ասաց՝ մեր պետությունը գնում է կործանման ուղիով, ժողովուրդը տառապում է, իսկ ներկայիս իշխանությունը ոչ թե պաշտպանում է մեր ազգային շահերը, այլ՝ քայքայում դրանք: Գիտեր, որ աշխատում եմ թերթում, առաջարկեց իր դիտարկումները ներկայացնել հասարակությանը՝ որպես սրտացավ, ահազանգ հնչեցնող քաղաքացու խոսք, առանց իր անունը հիշատակելու: Խոստացա կատարել խնդրանքը: Ներկայացնում եմ որոշ խմբագրմամբ:

Ասում է. Հայաստանը կանգնած է ճակատագրական խնդրների առջեւ: Վարչապետի վերջին ելույթը Եվրոպական խորհրդարանում, նրա իրականացրած հակահայկական գործողությունները, ամենօրյա խոսույթը ոչ միայն չեն պաշտպանում մեր ժողովրդի շահերը, այլեւ խորացնում են ներքաղաքական ճգնաժամը, թուլացնում պետական ինստիտուտները, սպառնում ազգային անվտանգությանը: Իսկ մեր երկիրը գտնվում է արտաքին ճնշումների ու շրջափակման մեջ՝ Ռուսաստանից մինչեւ Եվրոպական Միություն ու ԱՄՆ, եւ ցանկացած սխալ քայլ կարող է վերածել լայնածավալ ճգնաժամի:

Իր դիտարկմամբ, վարչապետի եւ ՔՊ կուսակցության աջակցությունն այս պահին 10-15% է կամ փոքր-ինչ ավելի՝ կախված ուսումնասիրողներից: Ընդդիմադիր ուժերն ունեն հասարակական աջակցություն, որը կարող է աճել, եթե նրանք կարողանան միավորվել, ձեւավորել միասնական ռազմավարություն եւ իրականացնել խաղաղ, օրինական, ընտրություններով իշխանափոխություն: Մարդկանց մի մասը վախեցած է, մյուսները՝ հիասթափված, բայց իրական վտանգը անտեսելն անխուսափելի աղետի կվերածվի: Ներքաղաքական բեւեռացումը խորանում է. ընտանիքներ, ընկերներ ու համայնքներ բաժանված են ընդդիմության ու իշխանության կողմնակիցների միջեւ, եւ սա չի կարող շարունակվել, առանց երկրին անդառնալի վնաս հասցնելու: Արտաքին քաղաքական ճնշումները շատ են. եվրոպական եւ ռուսական կողմերից անհամաչափ գործողություններ, տնտեսական ու դիվանագիտական խափանումներ են ձեռնարկվում, որոնք ուժեղացնում են անորոշությունը եւ թուլացնում մեր դիրքը տարածաշրջանում: Սահմանային ու անվտանգության սպառնալիքները չեն վերացել, կարող են վերաճել լայնամասշտաբ ռազմական հակամարտության, եթե իշխանությունը շարունակի նույն ռիսկային ուղին: Ազատ խոսքի եւ մամուլի սահմանափակումը թուլացնում է հանրության վերահսկողությունն ու խլում քաղաքացիների հնարավորությունը՝ մասնակցելու սեփական պետության կառավարմանը: Այս ամենը հստակ ցույց է տալիս, որ ժողովուրդը պետք է հասկանա իրավիճակի խորքը եւ զբաղվի իր անվտանգությամբ. այլեւս ոչ մի սպասում, ոչ մի հուսահատություն, ոչ մի կարճատես հույս՝ իշխանության նկատմամբ, որը կորցրել է վստահությունը: Ժողովուրդն այլ ճանապարհ է ուզում՝ արժանապատիվ, անվտանգ եւ կանխատեսելի ապագա, առանց թուրքերի ներխուժման վտանգի զգացողության, հայկական բանակի ու դիվանագիտության կողմից ամուր պաշտպանված: Իսկ Նիկոլ Փաշինյանի եւ ՔՊ-ի վարած քաղաքականությունն ուղղված է ոչ թե պետության, այլ անձնական իշխանության պահպանմանը: Նիկոլը չի կարող խաղաղ եւ ազգային շահերին համահունչ կառավարել, իսկ ժողովուրդը համաձայն չէ այն կուրսի հետ, որը նրանք տանում են:

Ընդդիմությունն ունի իրական հնարավորություններ, եթե ճիշտ ռազմավարություն որդեգրի: Առաջին եւ ամենակարեւոր քայլը պետք է լինի այն, որ բոլոր ընդդիմադիր ուժերը զերծ լինեն անձնական շահերից, իրար դեմ աշխատելուց եւ կենտրոնանան միայն ժողովրդի շահերի վրա: Հաջորդ կարեւոր քայլը տեղեկացվածությունն ու քարոզչությունն է: Երկրում տիրող իրական վիճակը պետք է մատչելի, պարզ լեզվով ներկայացնել մարդկանց՝ թվերով ու փաստերով, ցույց տալ վտանգները, որոնք կարող են հանգեցնել ազգային աղետի: Ժողովուրդը պետք է հասկանա, որ եթե անտարբեր լինեն, երբեք անվտանգ ու արժանապատիվ կյանքով չեն ապրի: Քարոզչություն պետք է արվի ոչ միայն սոցիալական մեդիայով, այլ նաեւ համայնքային հանդիպումներ, բաց ու փակ միջոցառումներ պետք է կազմակերպեն, որտեղ մարդիկ կլսեն ճշմարտությունը եւ պայքարի պատրաստ կլինեն: Կարեւոր քայլ է նաեւ վերահսկողությունն ընտրությունների նկատմամբ. միջազգային դիտորդներ, քվեարկության պրոցեսի մշտադիտարկում, հնարավոր խարդախությունների բացահայտում, որ ընտրությունները լինեն արդար, եւ հանրությունը տեսնի իր ձայնի ուժը: Բացի այդ, անհրաժեշտ է զարգացնել խաղաղ, օրինական ճնշման մեխանիզմներ: Երթեր, պիկետներ, հավաքներ՝ օրենքի սահմաններում եւ առանց բռնության, ապահովելով հանրային ճնշումը: Այդ ընթացքում կարեւոր է նաեւ իրավիճակը ներկայացնել տարբեր դիվանագիտական հարթակներում, զգուշացնել ռիսկերի մասին եւ ստանալ արտաքին աջակցություն՝ լրացուցիչ ճնշում գործադրելով իշխանության վրա: Երբ ընդդիմությունը հաղթանակ գրանցի, իսկ որ կգրանցի, դա հաստատ է, անհրաժեշտ է իրականացնել հետընտրական վերահսկողություն: Պետական ինստիտուտների վերականգնում, կոռուպցիայի կանխարգելում, ազատ խոսքի եւ լրատվամիջոցների հզորացում՝ ապահովելու, որ պետությունը դառնա ամուր, անկախ, ժողովրդավարական, եւ կանխվեն նոր ճգնաժամերը:

Ըստ զրուցակցիս, հունիսի 7-ի ընտրություններից հետո հնարավոր է 3 սցենար. առաջինը՝ ընդդիմության հաղթանակը, որը կվերականգնի ժողովրդի իշխանությունը, կամրապնդի ազգային անվտանգությունը, եւ հանրությունը կտեսնի իր ձայնի ուժը: Երկրորդը՝ միջանկյալ արդյունքներ, երբ կան որոշ հաջողություններ, բայց ներքաղաքական ճգնաժամը պահպանվում է, եւ անհրաժեշտ է շարունակական ճնշում ու հետեւողական քայլեր: Երրորդը՝ իշխանության պահպանությունը, ինչը կհանգեցնի երկարաժամկետ անկայունության, արտաքին ճնշումների աճի եւ պետական անվտանգության սպառնալիքի: Ժողովուրդը չի պատրաստվում ենթարկվել, թողնել, որ երկիրը տանեն ոչնչացման: Խաղաղ, օրինական, միասնական ու վճռական քայլերով հնարավոր է ազատել երկիրը, վերականգնել արժանապատվությունը եւ ապահովությունը: Միայն միասնական, տեղեկացված եւ հետեւողական գործողություններով մենք կարող ենք կանգնեցնել կործանման ճանապարհը, հաղթահարել ճգնաժամը եւ ստեղծել ապագա, որտեղ հայ ժողովուրդը կապրի արժանապատիվ, ազատ եւ ապահով:

Շատ զարմացած եմ նախկին «նիկոլականի» վրա, այն, ինչ նա ասում էր, միանգամայն անկեղծ ու մտահոգիչ էր: Ասաց, որ էլի կան իշխանամետ ընկերներ, ովքեր կասկածով են մոտենում այս իշխանությունների վերարտադրությանը: Չգիտեմ՝ «կոտրվո՞ւմ» են, թե՞ իրատես են դառնում: «Դարձի եկած ընկերոջ» խոսքերը ցույց են տալիս, որ նույնիսկ ամենահամառ իշխանամետների մեջ կան մարդիկ, ովքեր սկսել են տեսնել իրականությունը, հասկանում են վտանգները եւ իրավիճակի փոփոխություն են ուզում:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԸ՝ ԸՍՏ ՔՈՒՐԴ ՀԵՂԻՆԱԿԻ

Իրդա-արաբական ծագում ունեցող պատմաբան Ումիթ Քուրթը երկար տարիներ զբաղվում է Հայոց ցեղասպանության ուսումնասիրությամբ: 2021-ին Harvard University Press հրատարակչությունը լույս է ընծայել նրա «Այնթապի հայերը. ցեղասպանությունը եւ էկոնոմիկան՝ օսմանյան գավառներում» աշխատությունը, որում ներկայացնում է իր տեսակետը, որ Հայոց ցեղասպանության շարժառիթը եղել են տնտեսական բաղադրիչը, ագահությունն ու նախանձը: Որպես ապացույց՝ ներկայացնում է մի պատմություն, թե ինչքան մանրակրկիտ ու լավ են թուրքերը կազմակերպել հայերի բնաջնջման ծրագիրը՝ բյուրոկրատական առումով: Քուրթի ընտանիքում ժամանակին վախեցել են քրդերեն եւ արաբերեն խոսել, հեռու են մնացել թուրքական ազգայնականությունից: Նա կարծում է, որ թուրքական ինքնությունն իրեն պարտադրվել է: Հիշում է, որ նույնիսկ մանուկ հասակում, թեկուզ բնազդորեն, սակայն ընդդիմացել է թուրքական ինքնությանը:

Հեղինակը գրում է, որ մինչեւ 1915 թվականը Օսմանյան կայսրության տարածքում ապրող հայերի ձեռքում բավականին մեծ կապիտալ է եղել: Անդրադառնալով Այնթապի հայությանը՝ Քուրթը հիշում է պատմաբան Ալի Նադիր Ունլերին (1895–1986), որն իր աշխատություններում գրել է, որ Այնթապի կամ ներկայիս Ղազիանթապի հայությունը զարգացած է եղել ու հարուստ՝ տեղի թուրք մահմեդական բնակչությունից, գրավել է կարեւոր դիրքեր առեւտրի եւ տնտեսության մեջ: Իսկ արդեն ցեղասպանությունից հետո, ըստ Ղազիանթապի առեւտրի պալատի (Gaziantep Ticaret Odası Yıllığı) 1920-ականների վիճակագրության, այդ շրջանում այլեւս ոչ մի ձեռնարկություն չի մնացել մահմեդականների ձեռքում: Իսկ ինչպես է ձեւավորվել հայերի հանդեպ, ազգային եւ կրոնական հակակրանքից ու ատելությունից բացի, նաեւ տնտեսական նախանձը:

Քուրթը դա բացատրում է այսպես. 19-րդ դարում Օսմանյան կայսրությունն անդադար պատերազմների մեջ է եղել: Դա, իհարկե, եւ մարդկային ուժի, եւ նյութական միջոցների ահռելի կենտրոնացում էր պահանջում: 1856 թվականից օսմանյան իշխանությունները ստիպված են լինում զինակոչել նաեւ ոչ մահմեդական բնակչությանը: Սակայն հայերի, հույների եւ հրեաների համար սահմանվում է բանակից ազատվելու հատուկ հարկատեսակ՝ bedelat-ı askeriye: Ովքեր ի վիճակի են եղել վճարել՝ շարունակել են հանգիստ զբաղվել տնտեսական կամ այլ գործունեությամբ: Կայսրության թուրք կամ մահմեդական բնակչության մոտ դա դարձել է հակակրանքի պատճառ: Նրանք դա անարդար են համարել եւ ժամանակի ընթացքում այդ հակակրանքը վերածվել է ատելության ու դարձել այն նախադրյալներից մեկը՝ գաղափարական առումով, որն էլ հետո հիմք է տվել, որ օսմանյան պետությանն իրականացնել Հայոց ցեղասպանությունը: Այդ դժգոհ խմբերն 1910-ականներին դարձել են լուրջ լոբբի եւ ազդել օսմանյան կառավարության, մասնավորապես՝ Թալեաթ փաշայի վրա: Խնդիրը, հայերի բնաջնջումից զատ, նաեւ նրանց ունեցվածքին տիրանալն էր: Ու դա արվում էր օսմանյան քաղաքական վերնախավի դիրիժորությամբ, ինչի վկայությունները բազմաթիվ են, օրինակ՝ տեղական իշխանություններն ակտիվորեն ներգրավված են եղել դրանում: Եվ բացի այդ՝ դետալային կերպով մշակված է եղել հատուկ օրենսդրական բազա, որն իրավաբանորեն հիմք կտար տիրանալ բնաջնջվածների ունեցվածքին: Խոսքը Emval-i Metruke Kanunları կամ «Թողնված ունեցվածքի մասին» օրենքների ժողվածուի մասին է, որտեղ հստակ սահմանվել են ունեցվածքի առգրավումը, վերաձեւակերպումը, թողնված ունեցվածքի վերաբաշխումը: Ի դեպ, Ռաֆայել Լեմկինը բավականին նմանություններ է տեսել Հայոց ցեղասպանության եւ Գերմանիայում հրեաների Հոլոքոստի կազմակերպման մեթոդիկաների միջեւ: Ներկայացված աշխատությունը կարեւոր է եւ կարող է լայն ուսումնասիրությունների դաշտ բացել հատկապես Հայոց ցեղասպանության արդյունքում ունեզրկման պատմության եւ ծավալների առնչությամբ:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՉ ՄԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱԶԱՏ ԽՈՍՔԻ ՀԱՄԱՐ ԱՅՍՉԱՓ ՉԵՆ ՀԱԼԱԾՎԵԼ

Նիկոլ Փաշինյանը 2024թ. հունվարին հարցազրույց է տվել բրիտանացի լրագրողին, որտեղ իրեն հատուկ «բացահայտումներ» է արել: Մասնավորապես ասել է. «Ես ձեզ մի այսպիսի գաղտնիք բացահայտեմ. 2018-ից հետո Հայաստանում շատ լայնածավալ ժողովրդավարական բարեփոխումներ են սկսվել, եւ ես որոշումներ չեմ կայացնում՝ ում ձերբակալեն, ում՝ չձերբակալեն: Հայաստանում իրավակարգ կա հաստատված, կան իրավական ինստիտուտներ, եւ բոլոր դեպքերում Հայաստանի իրավական ինստիտուտներն են կայացնում որոշումները»:

Չեմ կարծում, թե Նիկոլի ասածին Հայաստանում լուրջ վերաբերվողներ կան: Բայց, ըստ նրա, ժամանակին իր նախորդներն անձամբ էին ցուցում տալիս ոստիկաններին, քննիչներին, դատախազներին, դատավորներին՝ քրեական գործեր սարքել ընդդիմադիրների դեմ, ազատազրկել նրանց: Իրականում ձեւավորվել էր մի համակարգ, որտեղ իշխանական վերնախավի ցանկություններն ու ազդակ-հրահանգները պատրաստ էին կյանքի կոչելու, ինչն իներցիայով շարունակվում է: 2025թ. զարգացումները ցույց տվեցին, որ Նիկոլն առանց թաքցնելու, բացահայտ, ուղիղ եթերներով կամ ֆեյսբուքյան գրառումներով ուղղակի հանձնարարականներ է տալիս «իրավապահ» համակարգի պատասխանատուներին եւ «վնգստացող դատավորներին»: Այդ ինչ իրավական ինստիտուտներ են, որոնք վարչապետի «ընտանիքի» մասնակցությամբ, շինծու մեղադրանքով զոհվածի մորն ազատազրկում ու նսեմացնում են կամ մանկահասակ երեխաներ ունեցող մայրերին ազատազրկում, այնուհետեւ հոտային բնույթով իշխող «քաղաքական» ուժի 64 պատգամավորների ստորագրությամբ միջնորդում ու փոխում խափանման միջոցը:

Ոչ մի իշխանության ժամանակ ազատ խոսքի համար ընդդիմախոսներն այսչափ չեն հալածվել, ինչքան վերջին ամիսներին, մասնավորապես՝ Միքայել Աջապահյանը, Սամվել Կարապետյանը, հոգեւորականները, ընդդիմադիրները եւ լրատվամիջոցները: Իրականում, Հայաստանում ձեւավորվում է մեկ «ընտանիքի» կողմից վերահսկվող կառավարման համակարգ՝ նպատակ ունենալով «լիցենզավորել» ամբողջ պետական կառավարման համակարգի կոռուպցիոն սխեմաները: Էկոնոմիկայի նախարարության եւ Ալեն Սիմոնյանի եղբոր կնոջ քրեական գործերն այդ օրակարգի մեջ էին, որն օգտագործեցին քարոզչական նպատակով: Ինչ վերաբերում է Նիկոլի եւ Աննայի «բաժանությանը», այն Նիկոլի գահավիժող վարկանիշը վերականգնելու, ամեն գնով իշխանությունը պահելու, ապագայում այն Աննային փոխանցելու ծրագրի առաջին քայլն է:

Հայաստանում հաստատված համակարգերի մասին լավագույնս ձեւակերպել է լրագրող Նիկոլ Փաշինյանն «Առավոտ» օրաթերթում 08.03.2002թ. տված հարցազրույցում, մասնավորապես ասելով. «...ՀՀ պետական կառավարման համակարգում շատ մեծ է դեգեներատների թիմը, նման մարդկանց շնորհիվ է, որ այսօր մեր պետական համակարգը գտնվում է այս վիճակում... Այսօր կառավարությանը, խորհրդարանին նայելիս առաջին միտքն այն է, թե, Աստված իմ, հնարավո՞ր է այսքան դեգեներատ մի տեղ հավաքել: Պարզվում է՝ հնարավոր է, ու ողբերգությունն այն է, որ այդքան դեգեներատ հավաքվել ու մեզ ղեկավարում են»: Նիկոլի՝ ժամանակին տված գնահատականները շատ ավելի բնորոշ են այսօրվա Հայաստանին, միայն մեկ հավելում. քանի որ Նիկոլն ազնիվ ու արդար մարդկանց մերժում է (տես 20.09.2008թ., «Հայկական ժամանակ» օրաթերթ), դեգեներատների թիմը համալրեց թերուս, ապազգային սրիկաների հոծ բանակով: Այդ նույն հարցազրույցում Նիկոլը հայտարարում է. «Դատախազության 99 տոկոսը հանցագործներ են»: Գլխավոր դատախազը հանցագործ է, իսկ այսօրվա դատախազությունը տարբերվո՞ւմ է Նիկոլի՝ ժամանակին տված գնահատականից: Իհարկե՝ ոչ:

Վերջերս սկսել եմ աշխատել արխիվային փաստաթղթերի հետ, որտեղ ժամանակին տրված իրավիճակներն ու քաղաքական գնահատականները հաճախ համեմատելով այսօրվա հետ՝ տեսնում ենք բոլոր առումներով շատ ավելի վատ վիճակ, նորից անդրադառնալով Նիկոլ Փաշինյանի 2008թ. սեպտեմբերի 20-ի հոդվածին՝ «Ինչպիսի իշխանություն եմ ուզում», որտեղ հիմնական ասելիքն այն էր, որ դիմում էր հանրությանը. «...երբեւէ թույլ չտաք դառնալ Սերժ Սարգսյան»: Եվ քանի որ ժամանակին ժողովուրդը մերժեց Սերժին, իսկ Նիկոլը հուսախաբ արեց ժողովրդին եւ 8 տարվա ընթացքում բացասական առումով գերազանցեց Սերժին, ուրեմն ինքը եւս մերժված է, եւ հունիսի 7-ն ամենահարմար պահն է՝ դա արձանագրելու:

ՀԳ. *Այդ ի՞նչ իրավական ինստիտուտների որոշմամբ են վարչապետի «ընտանիքին» պատկանող բիզնեսի ակնհայտ կոռուպցիոն դրսեւորումները, փողերի լվացումն ու ապօրինությունները ցինիկաբար քողարկվում. վարչապետը, Աննա Հակոբյանը, նրա մայրը, որոնք անմիջականորեն առնչվում են գործին, չեն հարցաքննվում ու չեն առերեսվում, 16 ամիս քրեական գործը քնեցնում են, այնուհետեւ գլխավոր դատախազի հովանավորությամբ կարճվում է, եւ իմ շարունակական հրապարակումները որեւէ հետեւանք չեն ունենում:*

Պետրոս ՄԱԿԵՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 26.03.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԱՊՐԻԼԻՆ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՎԱՐԿԱՆԻՇՆ ԱՎԵԼԻ ԿԻՋՆԻ

Փաշինյանն այդքան շուտ է սկսել իր քարոզարշավը, որովհետեւ տիրապետում է իրական թվերին եւ տեսնում է, որ իրենք վերընտրվելու որեւէ հնարավորություն չունեն՝ «Հրապարակի» հետ զրույցում ասաց քաղաքագետ **Ստեփան Դանիելյանը**: «Ի տարբերություն նախկին նախագահների, ինքն ուղղակի հնարավորություն չունի իշխանությունը կորցնելուց հետո ինչ-որ ձեւ հանգիստ ապրել Հայաստանում կամ Հայաստանից դուրս, այսինքն՝ սա իր համար կյանքի եւ մահու հարց է: Տեսնելով իրական թվերը, ինքն ուղղակի խուճապի մեջ է հայտնվել, եւ այն, որ մտնում է մետրո, տարբեր շրջաններ գնում, մարդկանց հետ ուզում է շփվել, ուղղակի փորձում է ինչ-որ ձեւ վերականգնել իր ինչ-որ վարկանիշ, այն վարկանիշը, որ ինքն ունեցել է 2018 թվականին կամ նույնիսկ 2021 թվականին: Հիմնական հնարքները հետեւյալն են. ինքը հասարակ մարդ է եւ հասարակ մարդկանց շահերն է պաշտպանում եւ առաջ եթե խոսում էր թալանի մասին, հիմա ինքն ուզում է ասել՝ գիտեք, ես ձեզ նման պեռաշկի եմ ուտում: Քանի հոգու վրա դա կաշխատի՝ ես չեմ կարող ասել: Ինքը վաստակաշատ հանգստի չի կարող գնալ, քանի որ չի կարող բազմաթիվ հարցերի պատասխանել: Կարծում եմ, ապրիլին իր վարկանիշն ավելի շատ կիջնի, ինչը խուճապ կառաջացնի իր թիմի մոտ, եւ ընտրություններին ընդառաջ հնարավոր է թիմը փլուզվի: Երկրորդը. ինքը փորձում է 2021 թվականի տեխնոլոգիան օգտագործել՝ խաղաղության եւ պատերազմի, եթե դա այն ժամանակ մարդկանց վրա ազդում էր, ապա հիմա շատ գռեհիկ է ստացվում, եւ հասկանալի է, որ սա Ալիեւի հետ միասին համատեղ օպերացիա է կազմակերպել: Ինքն ասում է՝ պատերազմ կլինի, Ալիեւը սպառնում է, որ պատերազմ կլինի վեց ամսից հետո, եթե Հայաստանն իրեն ճիշտ չպահի, այսինքն՝ Ալիեւն է փորձում որոշել, թե ով Հայաստանում իշխանություն կլինի»,- ասաց Դանիելյանը:

Քաղաքագետը նկատում է, որ այս՝ պատերազմով շանտաժը շատ գռեհիկ է, իր այս պահվածքը պանիկայի արտահայտություն է ու գնալով ինքն ավելի շատ սխալներ է թույլ տալու, ինչի հետեւանքով իր թիմը կսկսի հասկանալ, որ իրենից պետք է տարանջատվել, եւ յուրաքանչյուրը կփորձի իր հարցերը լուծել անջատ ու ավելի չմխրճվել այս անօրինականությունների մեջ, որն անում է գործող վարչապետ կոչվող այս անձը: Պատերազմով շանտաժն Ալիեւի հետ պայմանավորված խաղ է, ըստ Դանիելյանի, Ալիեւին անհրաժեշտ է, որ Փաշինյանը վերարտադրվի, որ հետագայում զիջումներ լինեն, եւ միասին փորձում են վախի մթնոլորտ ստեղծել Ալիեւը հայտարարում է, որ այս պահին ճանաչում է Հայաստանի տարածքային ամբողջականությունը, բայց վեց ամիս հետո կարող է իր տեսակետը փոխել: «Եվ սա այս միտքը վերցնում է, ասում է՝ սեպտեմբերին պատերազմ է լինելու, հոգեբանորեն ինքը փորձում է հիշեցնել 2020 թվականի սեպտեմբերի 27-ը, այսինքն՝ այս սեպտեմբերին նույնպես պատերազմ կլինի: Սա շանտաժ է, որովհետեւ Ադրբեջանը չի որոշում՝ Հայաստանի հետ պատերազմ կլինի, թե ոչ, ոչ էլ 2020 թվականին է Ադրբեջանը որոշել: Դա աշխարհաքաղաքական գործողություն էր, եւ Ադրբեջանին աջակցում էին Իսրայելը, Մեծ Բրիտանիան, Միացյալ Նահանգները, Պակիստանը եւ այլն: Դա ուներ որոշակի նպատակ, եւ հենց իրենց աջակցության շնորհիվ կարողացավ Ադրբեջանը հաջողության հասնել, եւ նաեւ Հայաստանի գործող վարչախմբի շատ տարօրինակ գործողությունները, որը գուցե ապագայում պարզաբանվի հասարակությանը, թե դա ինչ էր նշանակում, ինչու ինքը պատերազմի տարավ Հայաստանը: Սա հերթական շանտաժն է, եւ այս գործող իշխանությունը, գործող վարչապետն այս շանտաժին գնում է»:

Հայկա ԱԼՈՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am